

Հավելված՝
Գյումրի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի
N184-Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**



**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ
(2013-2016թթ.)**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Ք Ա Ռ Ա Մ Յ Ա

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____ /Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ/

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 12-ի N 184-Ա որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. Առաքելությունը	4
2. Կարգախոսը և զինանշանը	4
3. Գյումրու զարգացման 2013 - 2016 թվականների գերակա ուղղությունները	6
4. Աշխարհագրական դիրքը, կլիման	6
5. Իրավաչափ վարչարարության ապահովում	7
6. Համայնքային գույքի հաշվառում և կառավարում	8
7. Համատիրություններ	10
8. Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն	11
9. Քաղաքաշինություն և ճարտարապետություն	18
10. Տրանսպորտ	22
11. Առևտուր և սպասարկում	24
12. Գովազդ	25
13. Արտաքին կապեր և տուրիզմ	26
14. Մշակույթի և երիտասարդության հարցեր	28
15. Նախադպրոցական կրթություն	30
16. Ֆիզկուլտուրա և սպորտ	31
17. Անձնակազմի կառավարում	32
18. Գյումրու սոցիալ տնտեսական իրավիճակը	34
19. Համայնքի ընդհանուր իրավիճակի վերլուծություն	37
20. Քառամյա կապիտալ ծրագրերը ըստ ոլորտների	39
Հավելված 1	48
Հավելված 2	52
Հավելված 3	53
Հավելված 4	56
Հավելված 5	57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013-2016 թ.թ. քառամյա զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ընդունման նպատակն է սահմանել հաջորդ չորս տարիներին Գյումրի համայնքի (այսուհետ՝ Համայնք) զարգացման գերակա ուղղությունները և նշել դրանց հասնելու հնարավոր ճանապարհները և անհրաժեշտ միջոցառումները: Գերակա ուղղությունների հստակ սահմանումները հնարավորություն կստեղծեն իրագործել տեղական ինքնակառավարման առաքելությունը և հասնել համայնքի զարգացման տեսլականին:

Համայնքի զարգացման գերակա ուղղությունները սահմանելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության մշակման և գերակա ուղղությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Գերակա ուղղություններից բխող հիմնախնդիրները սահմանումներ են որոշակի ժամկետում իրականացվող անելիքների մասին: Ամեն տարի համայնքը կարող է մշակել նոր, համայնքի զարգացման գերակա նպատակներին առավել համապատասխան հիմնախնդիրներ և լրացումների ձևով ներառել սույն փաստաթղթում: Այս փաստաթղթում սահմանված հիմնախնդիրները նույնպես համապատասխանում են տվյալ պահին առկա իրավիճակին: Իրականացվել է համայնքի գնահատման ամփոփ փաստաթղթավորում, իրավիճակի գնահատման Ուժ-ՀՎ (SWOT) վերլուծություն, համայնքի քառամյա զարգացման ռազմավարության ընտրություն:

Ծրագրի նախագծի մշակմանը մասնակցել են քաղաքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները, քննարկվել և հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում ընդունելի համարված բոլոր առաջարկությունները:

1. Առաքելությունը

Գյումրի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների առաքելությունը քաղաքի տարածքում բնակիչների կենսամակարդակի հնարավոր առավելագույն բարենպաստ պայմանների մշտական և կայուն ապահովումն է, ինչպես նաև հյուրերի և զբոսաշրջիկների համար հարմարավետ ու գրավիչ պայմանների ստեղծումը:

2. Կարգախոսը, զինանշանը և դրոշը

Կարգախոսը, զինանշանը և դրոշը հանդիսանում են յուրօրինակ անհատականացման խորհրդանիշներ, որոնք բնութագրում են քաղաքի ինքնատիպությունը և ծառայում են քաղաքի ճանաչելիությանը: Դրանք օգտագործվում են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իր գործունեության ընթացքում, ինչպես նաև տեղացի գործարարների կողմից քաղաքի և իրենց գործունեության արդյունքների հասցեականության հանրայնացման համար:


2001թ-ին համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է քաղաքի զինանշանը՝



Զինանշանի սիմվոլների նշանակությունը հետևյալն են՝

- Հովազը- քանի որ Բագրատունիների նստավայրը եղել է Շիրակի մարզում օգտագործվել է Բագրատունիների զինանշանը:
- Կամարը, Արագած սարը և եկեղեցին օգտագործվել են որպես Գյումրի քաղաքին բնորոշ բնության և ճարտարապետական էլեմենտներ:
- Գ. Լուսավորիչի կանթեղն օգտագործվել է, քանի որ կա լեգենդ, որ Լուսավորիչի կանթեղը այրվում է Արագածի գագաթների միջև:
- Շաղուլը օգտագործվել է որպես արհեստների և ճշտապահության սիմվոլ:
- Զինանշանը ներքևից եզրափակող ցորենի հասկերը որպես լուծյան սիմվոլ:
- Կամարի աջ և ձախ կողմերում շրջանների մեջ կրթության և արվեստի սիմվոլներ:

2011թ-ին ավագանու որոշմամբ հաստատվել է քաղաքի դրոշը՝



- Գյումրի քաղաքի դրոշը սպիտակ է՝ ոսկեգօծ երիզով:
- Կենտրոնում կարմիր խաչ է՝ հովազի ոսկեգույն պատկերով:
- Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1 : 2 -ի:
- Սպիտակ գույնը խորհրդանշում է խաղաղ ապրելու կամքը:
- Կարմիր խաչը ժողովրդի հարատևման և քրիստոնեական հավատքի խորհրդատիչն է:
- Բագրատունյաց զինանշանը հանդիսացող ոսկեգույն հովազը խորհրդանշում է Հայաստանի անկախությունն ու պետականությունը:

Նախատեսվում է առաջիկայում անցկացնել լավագույն կարգախոսի ընտրության մրցույթ և այն ներկայացնել ավագանու հաստատմանը:

3. Գյումրու զարգացման 2013 - 2016 թվականների գերակա ուղղությունները

Գյումրու զարգացման 2013-2016 թվականների գերակա ուղղություններն են՝

- անօթևան ընտանիքների համար պետական և օրենքով չարգելված այլ միջոցներով բնակարանաշինության շարունակականությունը,
- համայնքային կառավարման որակի արմատական բարեփոխումը,
- տնտեսական գործունեության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը,
- գործարար և զբոսաշրջային գրավչության ապահովումը,
- համայնքային ենթակառուցվածքների նորոգումն ու ստեղծումը,
- հարմարավետ տրանսպորտային ենթակառուցվածքի ապահովումը և ուղևորատար տրանսպորտի զարգացման արդիական ռազմավարության ներդրումը,
- որակյալ, մատչելի և հարմարավետ նախադպրոցական հաստատությունների համակարգի կայացումը,
- սպորտի զարգացման և մասսայականացման նպասավոր պայմանների ստեղծումը:
- բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման և բակային տարածքների բարեկարգման միջոցառումների շարունակականությունը,
- մշակութային կյանքի զարգացումը, բարեփոխումը, ավանդույթների պահպանումը և խթանումը,
- գիտական ներուժի և ինովացիոն ծրագրերի ներգրավումը կենսագործունեության բոլոր բնագավառներում,
- Կենսամիջավայրի առողջացումը և կատարելագործումը:

4. Աշխարհագրական դիրքը, կլիման

Գյումրին գտնվում է Երևանից (Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք) 120կմ հեռավորության վրա, Շիրակի բարձրավանդակի կենտրոնական մասում, ծովի մակարդակից 1465-1560 մ բարձրություն ունեցող հարթավայրում, Հայաստանի հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի ձախ ափին:

Տարածքը կազմում է 4429 հեկտար:

Շիրակի բարձրավանդակի տափարակ մասի երկարությունը կազմում է մոտ 35 կմ, իսկ լայնությունը՝ 25կմ, որը սահմանակից է Փամբակի արևմտյան, Արագածի հրաբխային զանգվածի հյուսիսային և արևմտյան լեռներին ու նախալեռներին:

Համայնքն ունի աշխարհագրական հարմար դիրք, որը ակոսվում է Չերքեզի, Ջաջուռի և այլ ձորերով: Ռելիեֆը հարթավայրային է՝ ծածկված լճագետային և հրաբխային շուրջ 350մ հզորության նստվածքներով:

Գյումրու օդը կազդուրիչ է ու առողջարար, բուսականությունը տափաստանային է, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Քաղաքը տարեկան ստանում է մոտ 2500 ժամ արեգակնային լույս և ջերմություն: Մեծ է հորդաբուխ աղբյուրների քանակը, որոնք միասին մեկ վայրկյանում տալիս են 1200 լիտր ջուր:

Համայնքի մոտով հոսում է Հայաստանի Հանրապետության ջրառատ գետերից մեկը՝

Ախուրյանը: Գյումրին գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Այստեղ 1840թ. հունիսի 20-ին, 1846թ. մարտի 22-ին, 1926թ. հոկտեմբերի 29-ին, 1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի են ունեցել աղետալի երկրաշարժեր՝ մարդկային մեծ զոհերով և նյութական կորուստներով:

1837թ-ին կազմվել է համայնքի առաջին գլխավոր հատակագիծը: 1925թ. ճարտարապետ Ալ. Թամանյանը կազմել է համայնքի գլխավոր հատակագիծը, որը 1926-ի երկրաշարժից հետո վերափոխել է ճարտարապետ Դ.Չիսյանը: 1959-61թթ. կազմվել է համայնքի նոր գլխավոր հատակագիծ (ճարտ. Հ. Իսաբեկյան, Ս. Կարապետյան, Ն. Պետրոսյան):

1988թ-ի երկրաշարժից հետո կազմվել է «Երևան-նախագիծ» ինստիտուտի կողմից Գյումրի համայնքի նոր գլխավոր հատակագիծ (2005թ. ճարտ. Ս. Քալաշյան, Ա. Ալոյան, Հ. Գասպարյան, Ն. Պետրոսյան), որը գործում է առ այսօր:

2008թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 145,800 բնակիչ: Բնակիչների մեծ մասը Արևմտյան Հայաստանից (Էրզրում, Կարս, Սուշ) ներգաղթած հայեր են: Բնակվում են ռուսներ, ուկրաինացիներ, եզդիներ, քրդեր, հույներ, հայ բռնաներ, հրեաներ, լեհեր:

Ազգային փոքրամասնություններն ունեն իրենց հայրենակցական միությունները (ռուսներ, հույներ, լեհեր):

Այդ բնակատեղին, ուր այժմ Գյումրին է, հնում կոչվել է Կումայրի: Այս անունը սովորաբար կապում են Արևելավրոպական հարթավայրից (VIII դ. մ.թ.ա.) Սև ծովի արևմտյան ափերը ներխուժած Կիմերների անվան հետ:

Կումայրին՝ որպես բնակատեղի, գոյություն ունի ավելի քան երեքուկես հազարամյակ, որը հաստատվում է հնագիտական պեղումներից՝ հայտնաբերված նյութական և մշակութային հարուստ մնացորդներով և այլ արժեքավոր նյութերով:

Գյումրի համայնքի տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև -12°C , հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ 16°C և ցածր: Ձմեռը ցուրտ է, կայուն, և երկարատև ձյան ծածկույթը սկսվում է նոյեմբերի վերջից և վերջանում ապրիլի 2-րդ տասնօրյակում:

Գարունը երկարատև է, ցուրտ: Ցրտահարությունները միջին տվյալներով վերջանում են մայիսի 2-րդ կեսից: Ամառը կարճ է, զով և խոնավ՝ փոփոխական եղանակով: Աշունը սառն է: Առաջին կեսում գերակշռում է քիչ ամպամած, տաք եղանակը, երկրորդ կեսը փոփոխական է: Աշնանային ցրտահարությունները սկսվում են սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին:

Բուսականությունը տափաստանային է, գետահովիտներում աճում են ակացիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ:

Շրջակայքը հարուստ է շինանյութերով՝ տուֆով, բազալտով, դիատոմիտով, կավով, սևահողային արգավանդ դաշտերով:

5. Իրավաչափ վարչարարության ապահովում

Իրավիճակի գնահատում

Հանրային իրավահարաբերությունների ոլորտում համայնքի կողմից իրականացվող վարչարարությունը՝ ներառյալ քաղաքացիներին և իրավաբանական անձանց իրավունքների տրամադրման, փոփոխման, դադարման կամ վարչական պատասխանատվության կիրառման դեպքերը, անտեսվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերը, քաղաքացիների դիմումները, որոնց արդյունքում պարտադիր

անհրաժեշտ է հարուցել վարչական վարույթ և լուծման ընթացակարգը ապահովել նշված օրենքի պահանջներով, քննարկվել է «Քաղաքացիների դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, որը ուժը կորցրել է և գործում է միայն քաղաքացիների առաջարկությունների մասով:

Հիմնախնդիրներ

- Կարևորել տեղական ինքնակառավարման մարմնի դերը՝ որպես վարչական մարմնի:
- Պահպանել քաղաքացիների և իրավաբանական անձանց օրենքով սահմանված իրավունքները վարչական մարմնի հետ իրավահարաբերություններում:
- Վարչարարությունը իրականացնել օրենքով ամրագրված վարչարարության սկզբունքներին համահունչ, սահմանված կարգով և ժամկետներում՝ ընդունելով իրավաչափ վարչական ակտեր:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Քաղաքապետարան մուտքագրված յուրաքանչյուր դիմումի հիման վրա, եթե դրանով հայցվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակում որևէ իրավունքի տրամադրում, փոփոխում կամ դադարում, հարուցել վարչական վարույթ:
- Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով ապահովել վարույթի ընթացիկ՝ նախապատրաստական փուլը:
- Դիմումատուի մասնակցությամբ իրականացնել լսումներ և վարչական ակտ:
- Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կայացնել քննվող իրավաչափ վարչական իրավախախտումների գործերի քննությունը, իրականացնել մասնակցությունը՝ պահպանելով օրենքի բոլոր նորմերը:

6. Համայնքային գույքի հաշվառում և կառավարում

Իրավիճակի գնահատում

Մինչև օրս Գյումրի համայնքի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի (շենք- շինությունների) տնօրինման, վարձակալության տրամադրման, օտարման գործընթացով առանձին-առանձին զբաղվել են քաղաքապետարանի մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներ. լուծված չի եղել այդ աշխատանքների համակարգման, հաշվառման, միասնական տեղեկատվական բանկի համակարգչային ծրագրի ստեղծման և շահագործման հարցերը:

Գյումրու քաղաքապետարանի կողմից սպասարկվում է շուրջ 634 միավոր հողամասերի վարձակալության պայմանագրեր:

Համայնքային գույքի կառավարման միասնական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով 2012 թվականի նոյեմբերից Գյումրի համայնքի ղեկավարի

կարգադրությամբ իրականացվել է համայնքապատկան՝ ներառյալ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, նյութական և ոչ նյութական ակտիվների ամբողջական գույքագրում:

Հիմնախնդիրներ

- Համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, ոչ նյութական ակտիվների, անշարժ և շարժական գույքի համատարած և ամբողջական գույքագրում, դրանց հաշվառման համակարգի կատարելագործում:
- Համայնքային գույքի, օբյեկտների խմբավորում և դասակարգում, դրանց պահպանման և օգտագործման գործընթացի կանոնակարգում և վերահսկում:
- Գյումրու քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված բարոյական և ֆիզիկական մաշվածության ենթարկված գույքերի նկատմամբ, որոնք պահանջում են լրացուցիչ չհիմնավորված ծախսեր, իրականացնել առաջնահերթ օտարման գործընթաց:
- Գույքի հաշվառման համակարգի կատարելագործում:

Համայնքի հողային ֆոնդ

Իրավիճակի գնահատում

Գյումրի համայնքի տարածքը, ըստ 2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրության, 4429 հեկտար է. այդ թվում, համայնքային սեփականության հողերը կազմում են 3277,74 հա, պետական սեփականության հողերը՝ 687,52 հա, քաղաքացիներինը՝ 392,7 հա և իրավաբանական անձանց սեփականությանը՝ 66,1 հա:

Հիմնախնդիրներ

- Անհրաժեշտ է կանոնակարգել հողերի ընթացիկ հաշվառման և ամենամյա հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներ:
- Անհրաժեշտ է ճշգրտել Գյումրի համայնքի տարածքում կատարված կադաստրային քարտեզագրման տվյալները:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Անցկացնել համայնքային անշարժ գույքի գույքագրում:
- Իրականացնել հողերի ընթացիկ հաշվառում:
- Վերահսկողություն իրականացնել համայնքային գույքի պահպանման և օգտագործման գործընթացի վրա:
- Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարների դրույքաչափերի սահմանում, պայմանագրերի վերանայում, ըստ վերանայված դրույքաչափերի և դրույքաչափերի հրապարակում:

7. Համատիրություններ

Իրավիճակի գնահատում

Գյումրիում գտնվող 1526 բազմաբնակարան շենքերի կառավարումը իրականացվում է 21 համատիրությունների կողմից:

Բազմաբնակարան շենքերից 69-ը վթարային են և ունեն 3-րդ, 4-րդ կարգի վթարայնության աստիճան: Լավ վիճակում են «Մուշ - 2» և «Անի» թաղամասերի նորակառույց շենքերը:

Շենքերի կառավարման մարմինները՝ համատիրությունները, արդյունավետ չեն իրականացնում օրենքով իրենց վերապահված լիազորությունները: Պարտադիր նորմերի կատարման մասով բավարար վերահսկողություն չի իրականացվում:

Կառավարման մարմինների աշխատանքների ոչ թափանցիկությունը ստեղծում է անպատասխանատվության և անտարբերության մթնոլորտ ինչպես սեփականատերերի, այնպես էլ կառավարման մարմինների համար:

Ֆինանսական միջոցների հավաքագրումն ու ծախսումը կատարվել են ոչ թափանցիկ և ոչ նպատակային կերպով:

Դրանց մեծ մասը ուղղված է ոչ թե բազմաբնակարան շենքի պարտադիր նորմերի կատարմանը, այլ կառավարման մարմինների աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը:

Կանոնակարգված չեն համատիրությունների և քաղաքապետարանի, ինչպես նաև կոմունալ

ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

Հիմնախնդիրներ

- Համատիրությունների և սեփականատերերի միջև փոխհարաբերությունների, կառավարման գործընթացի վերահսկողության իրականացման մեխանիզմների հստակեցում:

- Սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման նկատմամբ անտարբերություն:

- Մաշված և կապիտալ վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:

- Սպասարկման վճարների անբավարար գանձում և ոչ արդյունավետ կառավարում համատիրությունների կողմից:

- Համատիրությունների մասին բնակիչների իրազեկվածության և իրենց լիազորությունների ու պարտականությունների տիրապետման պակաս :

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Տեղեկատվական և խորհրդատվական օգնություն, հակադարձ կապի մշակում և ներդրում:

- Պարտադիր նորմերի կատարման պահանջների վերահսկողության միջոցառումների մշակում և իրավասու օղակներին կողմնորոշում:

- Կառավարման մարմինների կադրերի պատրաստում և վերապատրաստում:

- Սպասարկման վարձավճարների գանձման համակարգի պարզեցում և բարելավում:

8. Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն

Ջրամատակարարում և ջրահեռացում

Իրավիճակի գնահատում

Ջրաապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է տնտեսական նպատակներով օգտագործման համար պիտանի ստորգետնյա ջրերով ապահովված գոտում: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառավարվում է «Շիրակ-ջրնուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից:

Ջրամատակարարման համար օգտագործվում և նախատեսվում է օգտագործել Վերին Ախուրյանի հանքավայրի և Գյումրու իջվածքի ստորգետնյա ջրերը: Վերին Ախուրյան հանքավայրի (Ղազանչիի, Կրասարի, Արփա լճի, Վարդաղբյուրի տեղամասերը) պաշարները կազմում են 287.7 հազ. մ³/օր, Ջուլգաղբյուրի տեղամասինը՝ 45.5 հազ. մ³/օր, Գյումրիի իջվածքի արտեզյան ջրերը կազմում են 295.8 հազ. մ³/օր:

Արտեզյան ջրերի ջրաբաշխիչների ազդեցության գոտին չի գերազանցում 10 կմ-ը, իսկ Վերին Ախուրյանի հանքավայրինը՝ 40 կմ-ը:

Ներկայումս այս հաշված պաշարների միայն 50-52% է օգտագործվում:

Որպես տեխնիկական ջուր օգտագործվում և նախատեսվում է օգտագործել նաև Ախուրյան գետի և ջրամբարների ջրերը:

Այսպիսով, խմելու որակի ջրի պաշարներով ապահովվածությունը բարենպաստ է: Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի տեխնիկական վիճակը: Գյումրու հարավում գտնվող մաքրման կայանը երկրաշարժից հետո չի գործում:

Ներկայումս և մինչև 1988թ.-ի դեկտեմբերի ավերիչ երկրաշարժը Գյումրի համայնքը խմելու որակի ջուր է ստանում ջրամատակարարման չորս համակարգով՝ Ղազանչիի երկու ջրատարներով՝ 820լ/վրկ, Ջուլգաղբյուրի՝ 450լ/վրկ, Կրասարի արտեզյան հորերից՝ 150 200լ/վրկ, Վարդաղի աղբյուրներից՝ 45լ/վրկ: Վերը նշված աղբյուրները, բացի Վարդաղից, գտնվում են քաղաքից 40-45 կմ հեռավորության վրա՝ Աշոցքի տարածաշրջանում: Ընդհանուր քանակը մոտ 2700 լ/վրկ, որից 450 լ/վրկ տրվում է մարզի գյուղերին:

Համայնքի ջրամատակարարման համակարգի գործող օրվա կարգավորիչ ջրամբարներն են՝ Հովունի գյուղի մոտ՝ 233000 մ³ տարողությամբ, հատակի նիշը՝ 1664.0 մ, Մարմաշեն գյուղի մոտակայքում՝ 432500մ³, հատակի նիշը՝ 1610.0 մ, Մայիսյան գյուղի մոտակայքում՝ 2310000 մ³, հատակի նիշը՝ 1652.0 մ և Արևիկի ջրամբարները՝ 232000 մ³, հատակի նիշը՝ 1616.0 մ: Ջրամբարների ընդհանուր ծավալը 40.0 հազ. մ³ է: Ներկայումս քաղաք մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարվում է յուրաքանչյուր ջրատարի համար առանձին-առանձին կառուցված քլորակայանների միջոցով:

Համայնքի ջրամատակարարման աշխատանքներին աջակցում է (KFW) Գերմանական զարգացման բանկը:

Ջրահեռացում

Համայնքի տարածքով հոսող գետակները՝ Գյումրին, Ղոր-Ղորին, Չերքեզի ձորը վեր են անվել բաց վիճակում հոսող կոյուղու կոլեկտորի: Ներկայումս չի գործում կեղտաջրերի բիոլոգիական մաքրման կայանը՝ 70.0 հազ. մ³/օր հզորությամբ: Կայանի աշխատանքի ժամանակ կեղտաջրերի քանակի մոտ 55%-ն էր ենթարկվում մաքրման՝ կայանի հզորության չափով, մնացածը առանց մաքրման լցվում էր Ախուրյան գետը:

Երկրաշարժից հետո, երբ սկսվեց համայնքի հյուսիսային մասում Նոր Մարմաշեն բնակելի թաղամասի կառուցապատման աշխատանքները, զուգահեռաբար իրագործվեց նաև թաղամասի կոյուղացումը և կեղտաջրերի հեռացումը դեպի կոյուղու մաքրման կայան՝ երեք գլխավոր կոյուղիներով՝ 1000-1200 և 600 մմ տրամագծերով: Բացի այդ, տեղանքի ռելիեֆային պայմանները թույլ են տալիս ինքնահոս հեռացում:

Նշված կոյուղիները, անցնելով հին համայնքի տարածքներով, իրենց մեջ են առնում շրջապատի կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

Ջրային կառույցներ

Ջրային կառույցները նախագծային փաստաթղթերով ունեն բնապահպանական նշանակություն. նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու քաղաքի ճարտարապետական տեսքը և համարվում են քաղաքի այցեքարտը:

Դրանցից են՝ Վարդանանց հրապարակի շատրվանները, Մանուշյան փողոցում անմխիթար վիճակում գտնվող շատրվանը:

Գյումրու քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող 4 ջրային կառույցներից մեկը շահագործման ընթացքում ֆիզիկապես և բարոյապես մաշվել է և ներկայումս չի գործում. Թվով 3 ջրային կառույցները մաքրելու և նորոգելու կարիք ունեն:

Մնացած ջրային կառույցների շահագործումը խիստ դժվարացել է տեխնիկական վիճակի անբավարարության պատճառով:

Հիմնախնդիրներ

- Ջրային կառույցների քայքայված և մաշված վիճակ:
- Ջրավազաններից ջրի մեծ չափերի կորուստ:
- Անսարք ջրային կառույցների վերագործարկում:

Էներգամատակարարում

Գյումրի համայնքի էներգահամակարգը կառավարվում է «Հայաստանի էլ.-գանգեր» ընկերության կողմից: Գոյություն ունեցող ենթակայանների տրանսֆորմատորների ընդհանուր հզորությունը 685 ՄՎտ է:

Հանրապետության էլեկտրահամակարգի հետ կապն իրականացվում է 220կվ և 110կվ երկշղթա բարձր լարման ՀԱԷԿ-«Գյումրի-2»-«Վանաձոր-2» բարձրավոլտ գծերով, որոնք անցնում են քաղաքի հեռանկարային սահմաններից դուրս. միայն «Գյումրի-1» և «Պոլիգոն»

ենթակայանները սնող 110կվ բարձրավոլտ գծերի համար նախատեսվում է պաշտպանիչ գոտի՝ նորմատիվային պահանջներին համապատասխան: Քաղաքի բնակելի տների, արտադրական ձեռնարկությունների արտաքին լուսավորության պահանջները բավարարվում են վերը նշված գլխավոր իջեցնող ենթակայաններից: Գործող 6-10 կվ լարման 27 բաշխիչ կայանների և 6-10/0.4 կվ լարման 432 հատ իջեցնող ցանցային միատրանսֆորմատորային ենթակայանները /կ.տ.ե/ քաղաքի բնակչության, հասարակական և կենսաապահովման օբյեկտների էլեկտրամատակարարումը վերականգնելու համար տեղադրվել են երկրաշարժից հետո ավերված ենթակայանների փոխարեն: Քաղաքի 6-10 կվ լարման մալուխային գծերի երկարությունը 314.0 կմ է, օդայինը՝ 22.0 կմ:

Գյումրի համայնքի գազամատակարարումը իրականացվում է «Հայ-Ռուս Գազարտ» ընկերության կողմից «Գյումրի-1» և «Գյումրի-2» ավտոմատ գազաբաշխիչ կայաններից, որոնց ընդհանուր հզորությունը 230 հազ.ն.մ ժամ է. սնումն իրականացվում է Կրասնի մոստ-Վանաձոր-Գյումրի-Արմավիր 550մմ տրամագծով բարձր ճնշման գազատարից:

2012 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Գյումրիում գազաֆիկացվել են 33 195 բնակարաններ, այդ թվում՝ 20125 բազմաբնակարան շենքեր, 11070 առանձնատներ:

Արտաքին լուսավորություն

Իրավիճակի գնահատում

2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Գյումրիում լուսավորվող փողոցների թիվը կազմել է 236, իսկ լուսավորության ցանցը՝ 98,6 կմ: Լուսավորվել է 5 բակ, 4270 հենասյունների վրա տեղադրված են 4270 լուսատուներ:

Հիմնախնդիրներ

- Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում և հիմնանորոգում:
- Արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում, էներգոխնայողական լուսատուների և այլ ժամանակակից մեթոդների ներդրում:
- Էներգատար տեխնոլոգիաների կրճատում:

Փողոցներ, վերգետնյա և ստորգետնյա անցումներ

Իրավիճակի գնահատում

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է: Կարևոր հանգամանք է ճանապարհների ճաքալցման աշխատանքների իրականացումը պոլիմերային և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է

ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի շահագործման ժամկետը:

Գյումրի համայնքի փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 3,2 մլն քմ:

2013թ. ճանապարհաշինության և ասֆալտապատման բնագավառում կներդրվի աշխատանքների իրականացման բովանդակությամբ նոր պայմանագրեր, որով կսահմանվեն նախատեսված աշխատանքների որակի նկատմամբ գործուն հսկողության մեխանիզմներ և երաշխիքներ:

Վերջին մի քանի տարիներին կտրուկ աճել է ինչպես Գյումրի համայնքում հաշվառված, այնպես էլ ամեն օր Գյումրիով անցնող տրանսպորտային միջոցների քանակը, որը հատկապես կենտրոնական փողոցներում բավական մեծ դժվարություններ և լարվածություն է առաջացնում հետիոտնի անվտանգ շարժի համար և առաջ է բերում տրանսպորտային խցանումներ:

Այդ տեսանկյունից կարևորվում է ստորգետնյա և վերգետնյա անցումների վերանորոգումը:

Գյումրու քաղաքապետարանում հաշվառված են 7 անցումներ, որից մեկը գտնվում է բավարար վիճակում, մեկը վերանորոգման կարիք ունի, իսկ հինգում անհրաժեշտ են իրականացնել շինարարական աշխատանքներ՝ հիմնականում երեսպատման, հարդարման, ջրամեկուսացման և լուսավորության գծով: Մեկ ստորգետնյա անցումում վարձակալական հիմունքներով գործում են առևտրի և սպասարկման կետեր: Քառամյա ժամկետում հիմնովին վերանորոգել և գործածել առնվազն ևս 3 գետնանցում:

Վարձակալությունից գանձվող գումարները նախատեսվում են ուղղել անցումների հիմնանորոգմանը և լուսավորության ցանցի վերանորոգմանը: Աշխատանքներ են տարվում մյուս անցումները ևս հնարավորության դեպքում հանձնել վարձակալության:

Հիմնախնդիրներ

- Գյումրի համայնքի փողոցների բարեկարգում:
- Փողոցների փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
- Փողոցների հիմնանորոգման աշխատանքներ:
- Համայնքի ծանրաբեռնված փողոցների թեթևացում՝ շրջանցիկ փողոցների բարեկարգման և համապատասխան ցուցանակների տեղադրումների միջոցով:
 - Ավտոմեքենաների խցանումների բացառում (ինտելեկտուալ լուսաֆորների տեղադրման և շրջանցիկ փողոցների նորոգման միջոցով):
 - Բնակչության անվտանգության ապահովում փողոցներն անցնելու ժամանակ (զծանշումներ, լուսաֆորներ, հորիզոնական պատնեշներ և այլն):
 - Սայլակների համար մատչելիության ապահովում՝ մայթերից երթևեկելի մասեր անցումներում թեքահարթակների կառուցում:
 - Տրանսպորտային միջոցներով ծանրաբեռնված և լայն փողոցներում երթևեկության կանոնակարգում և արագ ընթացքի կազմակերպում:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Իրավիճակի գնահատում

Համայնքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 600 հազ. քմ:

Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են թվով 4 մասնագիտացված ընկերությունների կողմից: Այժմ աշխատանքների մի մասը կազմակերպվելու են քաղաքապետարանի աշխատակազմի կողմից:

Համայնքի սանիտարական մաքրման, աղբահանության և փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպվելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 25 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմներ, այդ թվում, 4 միավոր՝ ձյուն մաքրող, 10-ը՝ հատուկ աղբատար, 3-ը՝ աղ և ավազ ցանող, 2-ը՝ մայթ մաքրող, շուրջ 3 ինքնաթափ, 1-ը՝ գրեյդեր, 2-ը՝ ձյուն բարձող և այլ մեքենա-մեխանիզմներ:

Աղբահանությունը կատարվում է շուրջ 1526 բազմաբնակարան շենքերից և շուրջ 15280 մասնավոր տնատիրություններից: Գյումրի համայնքի փողոցների, մայրերի, հրապարակների, եզրաքարերի երկարությամբ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են հիմնականում հավաքարարների՝ ձեռքով ավելելու միջոցով, որից հետո եզրաքարերի մոտ կուտակված աղբակույտերը աղբատար ֆանվորները բարձրում են մեքենան: Գյումրի համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 506 մեծ և փոքր աղբաման, որին պետք է ավելացվի ևս 100 հատ: 2013թ. նախատեսված է ավելացնել 50 աղբաման:

2012 թվականի հոկտեմբեր ամսին վերանորոգվել է աղբավայր տանող անանցանելի ճանապարհի 1,3 կմ երկարությամբ հատված:

Հիմնախնդիրներ

- Շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ֆիզիկական մաշվածություն և անբավարար քանակ:
- Աղբահանության վարձավճարների հավաքագրման թերի համակարգ և ցածր մակարդակ:
 - Համայնքի տարբեր հատվածներում աղբի մեծ կուտակումների առկայություն և չնախատեսված վայրերում աղբանետումներ:
 - Համայնքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման ձեռնարկությունների հիմնում և շահագործում:

Բնապահպանություն

Իրավիճակի գնահատում

Օդային ավազան

Օդը աղտոտող հիմնական տարրերի ֆոնային խտությունները ՀՀ ԲՆ շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի կողմից տրվում են ըստ հաշվարկային տվյալների՝ ելնելով բնակչության քանակից: Ըստ դրանց՝ Գյումրի համայնքի օդային ավազանի աղտոտվածության վերահսկողություն 1988 թ.-ից առ այսօր չի իրականացվում: 1999թ. Գյումրի համայնքում տեղադրվել է մեկ դիտակայան, որի միջոցով կատարվում են միայն օդում փոշու պարունակության դիտարկումներ: Գյումրի համայնքի օդային ավազանում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային խտություններն են մգ/մ³ փոշի՝ 0.4, ծծմբի երկօքսիդ՝ 0.05, ազոտի երկօքսիդ՝ 0.03, ածխածնի օքսիդ՝ 1.5: Ընդ որում, մթնոլորտի աղտոտման տեսանկյունից անհանգստություն են առաջացնում փոշին, որը գերազանցում է սահմանային խտությունը 2.6 անգամ, ծծմբի երկօքսիդը և ածխածնի օքսիդը գերազանցում են սահմանային թույլատրելի խտությունը 0.5 անգամ:

Ջրային ռեսուրսների պահպանություն

Գյումրի համայնքի ջրային ռեսուրսների պահպանման խնդիրը պրոբլեմային է: Առավել անբարենպաստ է Ախուրյան գետի վիճակը: Արդյունաբերական և կենցաղային ջրերը առանց մաքրվելու լցվում են գետը: Դեռ 1989թ. տվյալներով գետի աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում էր թույլատրելի սահմանային խտությունները՝ փոքրացնելով նրա ինքնամաքման հատկությունները: Այժմ ավելի անվերահսկելի է դարձել կեղտաջրերի հոսքը դեպի Ախուրյան գետը:

Համայնքի հարավում գոյություն ունեցող մաքրման կայանը իր հզորությամբ՝ 60հազ. մ³/օր, դեռ մինչև երկրաշարժը ապահովում էր կեղտաջրերի 50%-ի մաքրումը, իսկ այժմ այն պարզապես չի գործում:

Այժմ գետը թափվող կեղտաջրերի քանակը (0.5 մ³/վրկ) պահանջվում է նոսրացման համար 8 անգամ ավելի մեծ ջրի ծախս (4.0 մ³/վրկ), ինչը չի կարող ապահովել Ախուրյան գետի թույլատրելի մակարդակը, քանի որ, ըստ Ախուրիկի դիտակայանի տվյալների, Ախուրյան գետի 75% ապահովվածությամբ միջին օրական նվազագույն ծախսը կազմում է 2.66 մ³/վրկ:

Քաղաքի տարածքով հոսող Գյումրի, Ղոր-Ղոբի, Չերքեզիձոր գետակները վեր են ածվել բաց վիճակում հոսող կոյուղու կոլեկտորների և, ներծծվելով ավելի ներքին հորիզոնները, աղտոտում քաղաքի տարածքի տակ գտնվող արտեզյան ջրերի վերին հորիզոնները:

Ախուրյան գետի աղտոտվածությունը դարձել է պրոբլեմային և անհապաղ պահանջում է նոր մաքրման կայանի կառուցում:

Գյումրի համայնքի ջրահեռացման համակարգերը, այդ թվում՝ «քյարիզներ», քաղաքի կառուցապատման հետևանքով քայքայվել են և ի հայտ են եկել բնականոն հոսքերի խափանման երևույթներ: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ստեղծված հանձնաժողովը կատարել է ուսումնասիրություններ: Անհրաժեշտ է ուսումնասիրությունների արդյունքում մշակել ծրագիր և իրականացնել համապատասխան միջոցառումներ:

2012 թվականի գույքագրման տվյալների համաձայն Գյումրի համայնքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 552 հա, որից փողոցների սիզամարգեր՝ 10, 5 հա, զբոսայգիներ՝ 17,5 հա, պուրակներ՝ 4,8 հա, անտառ-պուրակներ՝

77 հա, Ախուրյան գետի ափամերձ տարածք՝ 22 հա: Ծառերի ընդհանուր թիվը 43 հազարից ավելի է, ծաղկային մակերեսը՝ 4.2 հա, ծաղկասածիլների քանակությունը մոտ 0, 706 մլն հատ:

2013 թվականին նախատեսվում է Գյումրի համայնքում ևս 2 հա կանաչ տարածքների հիմնում:

2013 թվականին կապահովվի 112 հա կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կկատարվի 3000 ծառատունկ: Հաշվի առնելով, որ Գյումրի համայնքը հանդիսանում է էկոլոգիապես ծանրաբեռնված բնակավայր, որտեղ անբարենպաստ բնակլիմայական պայմանները, տրանսպորտային միջոցների ավելացումն իրենց ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա, ներկայումս գերակա խնդիր է դարձել Գյումրի համայնքի կենտրոնական հատվածի զանգվածային կանաչապատումը:

Հիմնախնդիրներ

- Շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում:
- Բնական պաշարների արդյունավետ օգտագործում:
- Նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումների իրականացում:
- Համայնքի տարածքում բնական ջրավազանների աղտոտվածությունը պայմանավորված է հիմնականում արտադրական և կենցաղապասարկման օբյեկտների չմաքրված կամ ոչ բավարար մաքրված կեղտաջրերի արտահոսքերով:
- Գետակների ափամերձ և հարակից տարածքների վերածումը՝ որպես էկոլոգիապես մաքուր հանգստի գոտու:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Գյումրու փողոցային երթևեկության սխեմայի վերանայում, մշակում, քննարկում և հաստատում:
- Գյումրի համայնքի փողոցների կանաչ գոտիների և այլ համայնքապատկան կառույցների գույքագրում և քարտեզագրում:
- Գյումրի համայնքի փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար ձեռք բերել տարբեր մակնիշների (ձյուն մաքրող, բարձող, մայթ մաքրող, ինքնաթափ, գրեյդեր) և այլ հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմներ:
- Համայնքային աղբավայրի ճանապարհի կառուցում:
- Աղբավայր մտնող մեքենաների նկատմամբ վերահսկողության իրականացում, դրանց հաշվառում:
- Փողոցների երթևեկությունը կարգավորելու նպատակով նոր, ժամանակակից վայրկենացուցիչով լուսացուցիչների տեղադրում, երթևեկությունը կարգավորող նշանների թարմացում և ավելացում, փողոցների գծանշումների վերականգնում և թարմացում:
- Համայնքի տարածքում գտնվող թաղային նշանակության փողոցների բարեկարգում:
- Համայնքի արտաքին լուսավորության ցանցի կարգավորում, բարելավում,

արդիականացում:

- Բազմաբնակարան շենքերի սպասարկող համատիրությունների հետ կապի ստեղծում, նրանց աշխատանքների կանոնակարգման և համակարգման նպատակով միջոցառումների կազմակերպում:

- Համայնքային թիվ 3 գերեզմանատան տարածքի ընդլայնում:

Գերեզմանոցների տարածքների բարեկարգում, ճանապարհների կառուցում:

- Համայնքում կանաչ գոտիների ընդլայնում, նոր ծառերի տնկում, գազոնների մշակում, ծաղկապատում, թփապատում:

- Կանաչ գոտիներում ռոռգման ցանցերի վերանորոգում:

- Կոմունալ համակարգի աշխատանքների բարելավման նպատակով քաղաքապետարանի աշխատակազմին պատկանող ավտոպարկի ստեղծում:

- Քաղաքապետարանի աշխատակազմին պատկանող ավտոտրնսպորտային

միջոցների հիմնական վերանորոգում, փաստաթղթային տնտեսության կարգավորում:

- Գյումրու այգի-պուրակային գոտիները, նաև Ախուրյան գետի ափամերձ հատվածը և Չերքեզի ձորի տարածքը, քաղաքային հանգստի և ժամանցի բարեկիրթ, կանաչապատ և առավել օգտագործելի դարձնելու հետևողական ծրագրի իրականացում:

- Տարածքների բարեկարգում՝ դրանք՝ ներդրում կատարելու պատրաստ կազմակերպություններին կամ ընտանիքներին օգտագործման տրամադրելու ձևով՝ մշտական հսկողության և խրախուսման ձևերի կիրառմամբ:

- Գետակների հարակից տարածքներում թափոններից մաքրման աշխատանքների կազմակերպում և համակարգում:

- Ափամերձ տարածքներում սանիտարական մաքրման՝ աղբակույտերի վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում:

- Վերացնել քաղաքի տարածքում առկա շինարարական և կենցաղային աղբի չվերահսկվող կուտակումները:

9. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

Իրավիճակի գնահատում

Պատմամշակութային և հնագիտական հուշարձանները պահպանելու, դրանք զբոսաշրջության նպատակներին ծառայեցնելու ռազմավարությամբ Գյումրին կարող է դառնալ որպես զբոսաշրջության խոշոր կենտրոն:

Գյումրի համայնքը հարուստ է պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով: Համայնքի կենտրոնական մասն իր պատմաճարտարապետական և հնագիտական հուշարձաններով, ինչպես նաև Ախուրյանի ձորը՝ որպես բնական լանդշաֆտի պահպանման տարածք, ընդգրկված են Կոմայրի պետական պատմաճարտարապետական արգելոց թանգարանի սահմաններում (հաստատված ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1980 թվականի 4-ին):

Արգելոցում ընդգրկված են Կումայրի պատմական բնակատեղիի շրջանում XIX դարի սկզբում կառուցված ռազմական ամրոցները, որոնցից յուրաքանչյուրը ռազմական ճարտարապետության մի հիանալի համալիր է, ինչպես նաև բարձրաստիճան սպաների, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից գաղթած հայ ընտանիքների բնակելի թաղամասերի կառույցները, քաղաքի ճարտարապետական կերպարը՝ բնորոշող եկեղեցիները (Ամենափրկիչը, Ս.Աստվածածինը, Ս.Նշանը, Սբ. Գրիգոր՝ «զեղացոնց ժամը», ռուսական մատուռը, զորակայանների տարածքներում գտնվող ուղղափառ երկու եկեղեցիները), ռուսական ժամատունը՝ Պլավան ժամ, Չիթողջանների, Դրամփյանների, Ծաղիկյանների, Վեփիլյանների եկամտաբեր տները, բաղնիքները, գարեջրի գործարանը, առևտրական ուսումնարանը, օրիորդաց Օլգինյան գիմնազիան, Աղաբաբյանների, Մազմանյանների, Գարգալոյանների և այլոց բազմաթիվ մենատները: Արգելոցի անքակտելի մասն են կազմում նախապատերազմյան (մինչև 1941թ.) տարիներին կառուցված մի շարք ճարտարապետական բարձրարժեք շենքեր, այդ թվում, տեքստիլ կոմբինատի բնակելի և արդյունաբերական համալիրները,

Մազմանյանի, Քոչարի, Քաջազնունու, Չիսլիևի, Բանի, Սարկիսովի նախագծով կառուցված բազմաթիվ շինություններ:

Կումայրի պատմական արգելոց-թանգարանը զբաղեցնում է շուրջ 1000 հա տարածք, ուր գտնվում են ավելի քան 1600 շենք և պատմական նշանակության հուշարձաններ:

Պատմական հուշարձանների այս շրջանը մեծ վնասներ է կրել 1988 թ.-ի երկրաշարժից, սակայն կառույցների հիմնական մասերը պահպանվել են և վնասված շենքերը հնարավոր է վերականգնել:

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին «Գլենդել Հիլզ» կազմակերպության կողմից 2010 թվականին Գյումրի համայնքի «Մուշ-2» թաղամասում կառուցված բազմաբնակարան շենքերից 1056 ընտանիքներ ստացան բնակարան: Նույն կազմակերպության կողմից 2012 թվականի մայիս ամսին շահագործման հանձնվեց «Մուշ-2» և «Անի» թաղամասերի 1756 բնակարաններով թվով 38 բազմաբնակարան շենքեր: Ընթացիկ տարում ավարտվել և շահագործման են հանձնվել «Մուշ-2» թաղամասի 1200 աշ./տեղ դպրոցը:

Առաջնային խնդիրը բնակարանաշինության և «<տնակային>> տնտեսությունից քաղաքը ազատագրելու հարցն է, որը միշտ պետք է լինի օրակարգում և հետևողական գործողություններով հաղթահարվի, հարկավոր է ձեռնամուխ լինել արդեն գործարկված պետական միջոցներով բնակարանաշինության և որպես պետական աջակցություն աղետից տուժած ընտանիքներին անհատույց հանձնելու ծրագրի շարունակության և այդ ուղղությամբ նոր ծրագրեր ներգրավելու համար, համայնքը սեփական տնտեսված միջոցներով նույնպես նախաձեռնելու է բնակմակերեսների ստեղծման և առավել կարիքավոր ընտանիքներին բնակեցման համար: Ընտանիքները, որոնք հնարավորություն ունեն հիպոթեքային վարկերի կամ սեփական միջոցով բնակարան կառուցելու, կստանան քաղաքապետարանի աջակցությունը և սիմվոլիկ գնով համապատասխան հողատարածք:

2012 թվականին շահագործման հանձնվեց նորագույն բժշկական սարքավորումներով հագեցված «Գյումրի բժշկական կենտրոն»-ը:

Նախորդ տարիներին շահագործման է հանձնվել Գյումրու քաղաքապետարանի նորակառույց շենքը, որի ներքին շինարարական աշխատանքների մի մասը անավարտ է:

Շարունակվում է ՀՀ պետական պատկերասրահի Գյումրու մասնաճյուղի շենքի վերակառուցումը, ընթացքի մեջ են «Ավստրիական մանկական հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները:

Շարունակվում են Գյումրիի «Հայորդաց տուն» շենքի հիմնանորոգման, «Կաթողիկե» եկեղեցու կառուցման, «Երեխաների տուն»- ՊՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման աշխատանքերը: 2012 թվականի ապրիլին տեղի ունեցավ Գյումրու տեխնոպարկի հիմնական շենքի շինարարական աշխատանքների պաշտոնական մեկնարկը: Շինարարական և վերանորոգման արդյունքում 2 տարվա ընթացքում կստեղծվի շուրջ 6300 քմ մակերեսով ամբողջական համալիր:

Հիմնախնդիրներ

- Կումայրի արգելոց – թանգարանի կարգավիճակի և կառավարման անորոշ իրավիճակ:
 - Համայնքի գլխավոր հատակագծի շեղումներով կառուցապատում:
 - Համայնքի փողոցային ցանցի անբարեկարգ իրավիճակ:
 - Երկրաշարժից վթարված բազմաբնակարան շենքերի առկայություն:
 - Գերեզմանատների հողային ռեսուրսների պակաս:
 - Արտադրական տարածքների անբարեկարգ վիճակ:
 - Անհատական բնակելի տների շինարարության համար նախատեսված ժամկետների խախտումներ :
 - «Մուշ-2» նորակառույց թաղամասի սպասարկման ենթակառուցվածքների բացակայություն:
 - Բազմաբնակարան շենքերի բակերի անբարեկարգ վիճակ:
 - Համալիր ավտոտնակների և ավտոկայանատեղիների բացակայություն:
 - Սպասարկման օբյեկտների ոչ համաչափ տեղաբաշխում:
 - Զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայություն:
 - Պատմաճարտարապետական հուշարձանների անմխիթար վիճակ:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Ավտոտրանսպորտային միջոցները փողոցներում և նրանց հարակից տարածքներում կայանելու համալիր կանոնակարգման մեխանիզմների ներդրում:
 - Հետիոտնի շարժման անվտանգության նկատառումներից ելնելով՝ ստորգետնյա և վերգետնյա անցումների վերանորոգում:
 - Սպորտային և խաղահրապարակների վերանորոգում:
 - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում:
 - Ավարտին հասցնել քաղաքապետարանի ներքին շինարարական աշխատանքները:
 - Միեր Մկրտչյան փողոցի նախագծային և շինարարական աշխատանքներ (Շիրակացի և Խրիմյան Հայրիկ փողոցների միջակա տարածք):
 - Նոր գերեզմանոցի տարածքի հետ կապված աշխատանքների իրականացում:
 - Երևանից Գյումրի մտնող մայրուղու (առաջնահերթ) և Թբիլիսյան խճուղուց (երկրորդ հերթ) մուտքերի ճարտարապետական լուծումների մշակում:
 - Նախկին Տեքստիլ կոմբինատի այսօրվա բարձիթողի վիճակում գտնվող տարածքի խնդիրների լուծումների մշակում:

- «Կումայրի արգելոց»-ի հետ կապված սահմանների ճշտում, վերահաշվառում, դասակարգում և այլն:
- Գյումրի համայնքի վարչական տարածքի գոտևորման նախագծի մշակում:
- Համայնքը, և հատկապես նրա կենտրոնը, նրա բնակիչների և հյուրերի համար առավել հարմարավետ և բարետես դարձնելու աշխատանքների իրականացում:
- «Կումայրի» պատմամշակութային արգելոց - թանգարանի կարգավիճակի վերականգնում, նրա պահպանության, քաղաքաշինական միջավայրի առողջացման, արտահայտչական բնորոշ դիմագծի և ճարտարապետական առանձնահատկությունների վերանայում:
- Ընտրել տարածքներ ժողովրդական, ավանդական արհեստների և կիրառական արվեստի ցուցադրական գործունեության համար:
- Գյումրու տեխնոպարկի (օդանավակայանի և նախկին պոլիտեխնիկ ինստիտուտի տարածք) գրավչության և ինվեստիցիաների նկարագրմանը նպատակաուղղված միջոցառումների ձեռնարկում:
- Սավոյան փողոցի պուրակի վերականգնում, շատրվանի վերաշահագործում և այլն:
- Շենքերի բակերի բարեկարգում, հանգստի և ժամանցի հաճելի միջավայրի, միջոցառումների կազմակերպում՝ բնակչության, հասարակական կազմակերպությունների, համատիրությունների հետ համատեղ:
- Համայնքի գլխավոր հատակագծի գոտևորման նախագծին համապատասխան՝ ներկայացնել կարևոր քաղաքաշինական տեղամասերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծային առաջարկություններ, ըստ նպատակահարմարության՝ մշակված նախագծերը ներկայացնել հասարակական քննարկումների և մասնագիտական խորհրդատվության:
- Ամբողջական կառուցապատման նպատակով ընտրել հողահատվածներ ինչպես հասարակական օբյեկտների շինարարության, այնպես էլ բնակելի տների համալիրների համար:
- Վերանայել համայնքային զբոսայգիների և պուրակների տարածքների օգտագործման ձևերը՝ կանաչ տարածքները և տեղադրված արձաններն ու փոքր ճարտարապետական ձևերը վերականգնելու և միջավայրը բարենորոգելու նկատառումով:
- Համայնքի կենտրոնը և հատկապես շուկայամերձ տարածքը ազատել բացօթյա առևտրի վաճառատեղաններից և մարդաշատ բանուկ մայթերն ու փողոցները զբաղեցնող, երթևեկության և հետիոտնի անվտանգ շարժմանը խոչընդոտող կրպակներից, տաղավարներից:
- Շուկայական առևտուրը և սպասարկումը ավելի քաղաքակիրթ, հարմարավետ և ակնահաճո դարձնելու համար մշակել, գծագրել, ստեղծել և առանձնացված տարածքներում տեղադրել քաղաքաշինական նորմերին և սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող առևտրի նորաճ տաղավարներ, շարժական ցուցափեղկեր, հավաքովի տոնավաճառային ծածկարաններ, որոնցում հնարավոր կլինի կազմակերպել և իրականացնել ժողովրդական արվեստի ձեռագործ նմուշների սեզոնային ցուցահանդես-վաճառքներ:
- Մշակել ծրագիր և ներկայացնել պետական կառավարման մարմիններին, շահագրգիռ հասարակական և այլ կազմակերպություններին վթարային վիճակում գտնվող կամ խիստ վնասված պատմամշակութային բարձր արժեք ներկայացնող հուշարձան-շենքերի և շինությունների մասնակի վերանորոգման և պահպանության համար:

10.Տրանսպորտ

Իրավիճակի գնահատում

Գյումրի համայնքն ու նրան հարող տարածքները գտնվում են տրանսպորտային ցանցով առավել ապահովված գոտում: Գյումրիով է անցնում Վրաստանի, Ռուսաստանի (Երևան- Գյումրի-Վանաձոր-Թբիլիսի-Բաթումի-Փոթի, նաև դեպի Մոսկվա) և Թուրքիայի հետ կապող երկաթուղիները: Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագծով նախատեսված է հեռավոր ապագայում (քաղաքում տարածքային մեծ պահանջարկի դեպքում) երկաթուղին դուրս հանել քաղաքի տարածքից և այն անցկացնել քաղաքի արևելյան մասով:

Գյումրին ունի շահագործվող տեխնիկական բավարար մակարդակ և թոփքների մեծացման հնարավորություն ունեցող միջազգային նշանակության օդանավակայան:

Զարգացած է նաև ավտոմոբիլային ճանապարհների ցանցը: Գյումրու միջով անցնում է Մայիսյան-Բավրա-Վրաստանի սահման, Գյումրի-Կարս, Գյումրի-Վանաձոր-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհները:

Համայնքի արևմտյան հատվածներով անցնում են Երևան-Արմավիր-Անի-Պեմգա-Գյումրի, Գյումրի-Ամասիա-Պաղակն հանրապետական նշանակության ճանապարհները:

Գյումրի քաղաքը շրջակա բնակավայրերի հետ կապված է տեղական նշանակության ճանապարհներով:

1988թ. երկրաշարժից հետո նախագծվեց քաղաքի արևելյան շրջանցիկ ճանապարհը, իսկ կառուցվեց միայն նրա 5.4 կմ հատվածը, որը ձգվում է Ախուրյան տանող ճանապարհից մինչև Ազատան տանող ճանապարհը: Իսկ Ախուրյանի ճանապարհից մինչև Մայիսյան տանող ճանապարհահատվածի միայն հողային պաստառն է մասամբ կառուցված: Անվիճելի է, որ քաղաքին անհրաժեշտ է շրջանցող ճանապարհ, որը մաս է կազմում «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհին: Անհրաժեշտ է պետական աջակցությամբ ավարտին հասցնել շրջանցիկ ճանապարհի կառուցումը՝ համայնքից հանելով ծանր բեռնատար ավտոմեքենաների հոսքը, որը փողոցների քանդման պատճառներից մեկն է: Այդ շրջանցիկը լինելու է Հյուսիս - Հարավի մաս:

Տրանսպորտային կապի տեսանկյունից ներկայումս համայնքի հիմնական խնդիրը համայնքով անցնող երկաթուղագիծն է, որը հյուսիսից հարավ այն բաժանում է երկու մասի, որոնք միմյանց հետ կապվում են միայն երկու գծանցով, մեկը՝ տարբեր մակարդակներում (Ախուրյան խճուղու մուտքը համայնք) և մյուսը՝ միևնույն մակարդակում (Սպիտակ տանող ճանապարհի վրա): Դա է պատճառը, որ համայնք մուտք գործող այդ ուղիները և նրանց շարունակությունը կազմող համայնքային փողոցները մյուսների համեմատությամբ առավել ծանրաբեռնված են:

Համայնքի ուղևորատար հիմնական տրանսպորտի դերը <<ստանձնել>> են երթուղային միկրոավտոբուսները, որոնց քանակը մարդատար տրանսպորտի հոսքում կազմում է 90-95%: Համաձայն վիճակագրական տվյալների՝ ներկայումս Գյումրի քաղաքի բնակչության փաստացի թիվը կազմում է մոտ 145.800 մարդ: Քաղաքում գրանցված է 14926 անձնական և 730 արտադրական ձեռնարկությունների ավտոմոբիլ:

Ավտոմոբիլի զագիայի գործակիցը կազմում է $(14926+730):145800=0,17$, այսինքն, 107

ավտոմոբիլ յուրաքանչյուր 1000 բնակչին:

Գյումրի քաղաքում գործում են թվով 11 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 3 միավոր շարժակազմով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 2 մասնավոր կազմակերպություններ:

Ավտոկայանատեղեր

Գյումրի համայնքում տրանսպորտային միջոցների կայանատեղերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ դրանց միայն մի մասն է գործում:

Համայնքում ավտոկայանատեղերի կազմակերպման հարցը լուրջ հիմնախնդիր է, և այն կանոնակարգելու նպատակով պետք է կազմակերպել քննարկումներ:

Նախատեսվում են վերանայել պայմանագրերը, որոնք կնքվել են ավտոկայանատեղերը վարձակալության վերցրած որոշ կազմակերպությունների և անհատների հետ, սահմանել ավտոկայանատեղերի կազմակերպման հստակ կարգ: Ավտոկայանատեղերի վարձակալության պայմանագրեր են կնքվել: Կայանատեղերում տեղադրվել են համապատասխան ճանապարհային նշաններ, կատարվել գծանշումներ, սակայն դեռևս դրանց աշխատանքները կանոնակարգված չեն:

Համայնքում առկա են անմխիթար վիճակում գտնվող 3 երթակարգավարական կետեր: Անհրաժեշտ է ստեղծել ևս 10 ենթակարգավորման կետեր, որոնց միջոցով կարգավորվելու է ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների աշխատանքը:

Հիմնախնդիրներ

- Ներհամայնքային երթուղիները գերհագեցված են միկրոավտոբուսներով:
- Ցածր է համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման մակարդակը:
- Հասարակական տրանսպորտի կանգառները բարեկարգված և կահավորված չեն:
- Ցածր է երթուղիները սպասարկող կազմակերպությունների պատասխանատվությունը:
- Բավարար չէ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը:
- Բավարար չէ հսկողությունը տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի նկատմամբ:
- Ցածր է ուղևորների սպասարկման մակարդակը:
- Կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել տրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպման և գործունեության հարցերում:
- Հասարակական տրանսպորտի երթակարգավարական կետերը բացակայում են:
- Ներհամայնքային ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցը ենթակա է վերանայման:
- Համայնքում անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը: Համայնքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար 2013-2016թթ. անհետաձգելի խնդիր է դարձել ավտոբուսային հավաքակազմի համալրումը փոքր և

միջին տեղատարողության ավտոբուսներով և դրան գուզահեռ միկրոավտոբուսների քանակի կրճատումը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Փոքր և միջին տեղատարողության նոր, համայնքային ավտոբուսների երթուղիների կազմակերպում:

- Գյումրու համայնքային հասարակական տրանսպորտի կանգառների կազմակերպման կանոնակարգում:

- Գյումրու ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում:
- Ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների կազմակերպում և անցկացում:

- Ավտոկայանատեղերի կանոնակարգմանն առնչվող միջոցառումների իրականացում:

11. Առևտուր և սպասարկում

Իրավիճակի գնահատում

Գյումրի համայնքում գործում են շուրջ 130 առևտրի տաղավարներ, սննդի շուրջ 320 խանութներ, գյուղատնտեսական արտադրանքի 2 շուկաներ, հանրային սննդի շուրջ 35 օբյեկտ:

Գյումրի համայնքում անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտները, իսկ կենտրոնական փողոցներին հարող տարածքները և մայթերը գերհագեցված են կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ ծառայում են բացօթյա ապօրինի առևտուր իրականացնողների համար որպես պահեստներ: Ինչպես այդ, այնպես էլ պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը ենթակա է կանոնակարգման:

Հիմնախնդիրներ

- Բավարար հսկողություն չի իրականացվում վաճառվող ապրանքների որակի, ժամկետանց ու խոտան ապրանքների վաճառքի արգելման ուղղությամբ:

- Չկա հսկողություն կենցաղային ծառայությունների ոլորտում:

- Կանոնակարգված չեն բացօթյա առևտուրը, բացօթյա հանրային սննդի և բացօթյա կենցաղային ծառայությունների գործունեությունը, շրջիկ առևտրի կետերի միջոցով իրականացվող վաճառքը, ծաղիկների, ձմերուկի, սելիի, գործարանային փաթեթավորմամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի բացօթյա վաճառքը:

- Գյումրիում գործող գյուղմթերքների արտադրանքի շուկաներն աշխատում են թերձանրաբեռնվածությամբ:

- Կանոնակարգված չէ նաև ավտոտրանսպորտային միջոցների վաճառքի շուկայի գործունեությունը:

- Ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունի Գյումրի համայնքի փողոցներում տեղակայված կրպակների (տաղավարների) մեծ մասը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում, այդ թվում, առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտում գործունեության լրացուցիչ կանոնների և պայմանների մշակում:
- Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:
- Համայնքի տարբեր մասերում գյուղատնտեսական մթերքների նոր շուկաների կազմակերպում:
- Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրի և կենդանի անասունների շուկաների կազմակերպում:
- Ստորգետնյա անցումներում առևտրային տարածքների տրամադրում և առևտրի կազմակերպում:
- Բացօթյա ապօրինի առևտրի արգելում:

12. Գովազդ

Իրավիճակի գնահատում

Ճարտարապետական միջավայրի ձևավորման հիմնական տարրերից մեկը գովազդն է: Համայնքում զբոսաշրջության զարգացման և հյուրերին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման համար հյուրանոցների, քաղաքի հիմնական մշակութային օջախների, հասարակական սննդի կետերի գտնվելու վայրերի վերաբերյալ բացակայում են խորհրդանշող վահանակները, ինչպես նաև քաղաքի մուտքերը խորհրդանշող վահանակները թարմացման կարիք ունեն:

Ձևավորման միջոցների համալիրում բաց տարածությունների կազմավորման համար հարկավոր է կիրառել միջավայրը հազեցնող ճարտարապետական փոքր ձևեր: Դրանց թվին են պատկանում շատրվանները, լողավազանները, լապտերները, նստարանները, ծածկերը, տաղավարները, կրպակները և միջավայրի այլ տարրեր:

Գյումրի համայնքի տարածքում 2012թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ տեղադրված են 850 արտաքին գովազդային նյութեր, այդ թվում, 88 գովազդային վահանակների և 40 հենասյունների վրա:

Գյումրի քաղաքում արտաքին գովազդի ոլորտում գործունեություն են ծավալում հետևյալ կազմակերպությունները՝ «ՀԻՆ ԹԱՂ» ՍՊԸ, «Իմիջ ՄԳ» ՍՊԸ, «ԷՅԹԻԷԼ Սերվիսիս» ՍՊԸ և «Արաքս»- ՍՊԸ -ն:

Գովազդի ոլորտը Գյումրի քաղաքում կարգավորվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ ավագանու կողմից սահմանվել է մեկ քմ-ի համար հետևյալ գովազդային սակագները՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ,

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)

- արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 4000 (չորս հազար) դրամ,
- զ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ,
- դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 1000 (մեկ հազար) դրամ:

Հիմնախնդիրներ

- Հին քաղաքի գրավչության խնդիր:
- Համայնքի գեղագիտական միջավայրի բարելավում:
- Ճարտարապետական փոքր ձևերի անբավարար կիրառություն:
- Տեղեկատվական սարքավորումների բացակայություն:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Կազմակերպել քաղաքում տեղադրված արտաքին գովազդի գույքագրման և չափագրման աշխատանքներ, գանձման գործընթացի վերահսկում, ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժում:
- Սահմանել հսկողություն գովազդային նյութերի բովանդակության վերաբերյալ:
- Կազմակերպել Գյումրի քաղաքում տեղեկատվական ուղեցույցերի տեղադրում՝ փողոցների անվանումների ցուցանակներ, շենքերի համարակալումներ:
- Ապահովել քաղաքի մուտքերը խորհրդանշող գովազդային նյութերի տեղադրում:

13. Արտաքին կապեր և տուրիզմ

Գյումրու քաղաքապետարանը համագործակցել և համաձայնագրեր է կնքել շուրջ 8 քույր քաղաքների հետ՝

1. Ռուսաստանի Դաշնություն – քաղաք Մոզդոկ – պայմանագիր 2011թ.
2. Իտալիայի Հանրապետություն – քաղաք Նարդո – հուշագիր 2009թ.
3. ԱՄՆ Վիրջինիա նահանգ - քաղաք Ալեքսանդրիա – հռչակագիր 1990թ.
4. Բրիտանիայի – քաղաք Աշֆիլդ – համաձայնագիր 1998թ.
5. Արգենտինա – Կորդոբա – համաձայնագիր – 2002թ.
6. Ֆրանսիա – քաղաք Քրեյթեյ – համագործակցության պայմանագիր 2009թ.
7. Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն – Օզասկո – պայմանագիր – 2006թ.
8. Բուլղարիա – քաղաք Պլովդիվ – 2004թ.
9. Հունաստան – քաղաք Սալոնիկ – 2000թ.
10. Ռումինիա – քաղաք Պիտեշտ -2012 թ.

Նախատեսվում է ընդլայնել քույր և գործընկեր քաղաքների ցանկը, որոնց հետ համագործակցության գերակա ուղղությունները լինելու են տուրիզմի զարգացումը և համատեղ ձեռնարարկատիրական ծրագրերը:

Աշխատանքներ են տարվում ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ կապված տարբեր

ուրտներում առկա խնդիրների համատեղ լուծման համար:

Անհրաժեշտ է մշակել ծրագրեր նոր գործընկերներ գտնելու և արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու համար՝ հատկապես Գյումրի համայնքի ներդրումային դաշտն ընդլայնելու և նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

Հիմնախնդիրներ

- Դոնոր կազմակերպությունների և առաքելությունների մոտ Գյումրի համայնքի նկատմամբ հետաքրքրության բացակայություն:
- Արտաքին ներդրողների համար նպաստավոր պայմանների բացակայություն:
- Տեղեկատվության ոչ բավարար ապահովում:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Գյումրի համայնքի պատմությանը, մշակույթին և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացում:
- Գովազդային բազայի ընդլայնում, քաղաքի մասին հզոր տեղեկատվական շտեմարանի ստեղծում և տարածում:
- Գյումրի համայնքում միջազգային համաժողովների, սեմինարների, կլոր սեղանների և այլ ձևաչափերի հանդիպումների կազմակերպում և անցկացում:
- Առկա միջազգային փորձի, իրականացվող ծրագրերի և նախագծերի ուսումնասիրում, համագործակցության դաշտի ընդլայնում:
- Գյումրի համայնքում օտարերկրյա ներդրումների ներգրավում:
- Զբոսաշրջության զարգացման խթանում:
- Սփյուռքի հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպում:
- Գյումրիում զբոսաշրջության, գիտակրթական, մարզական, մշակութային և այլ ուղղությունների զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի փաթեթների մշակմանը և այդ ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցառումների համակարգում:

14. Մշակույթի և երիտասարդության հարցեր

Իրավիճակի գնահատում

Գյումրի համայնքում գործում է 8 գրադարան, որոնցից 6 –ը գտնվում է Գյումրի համայնքի քաղաքապետարանի ենթակայության տակ: 2012թ. քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող գրադարաններում առկա գրքերի քանակը կազմում է 167հազ. կտոր: Ընթերցողների թիվը ընթացիկ տարվա 3 եռամսյակում կազմել է 42400 մարդ:

Գյումրի համայնքում գործում են 7 թանգարան, որոնցից 4 –ը՝ քաղաքապետարանի ենթակայության տակ՝ Հովհ. Շիրազի հուշատուն-թանգարան, Ավ.Իսահակյանի հուշատուն թանգարան, Մ. Մկրտչյանի թանգարան, Ե. և Մ. Ասլամազյան քույրերի պատկերասրահ: Գյումրի քաղաքի թանգարանային հավաքածուներում 2012թ. հոկտեմբերի

1-ի դրությամբ ընդգրկված է 4520 ցուցանմուշ:

Գյումրի համայնքում գործում են երաժշտական և արվեստի 7 դպրոց: Գյումրու քաղաքապետարանի ենթակայության տակ գործում են երաժշտական 6 դպրոց, որոնցում սովորում են 1310 աշակերտ: Այդ դպրոցներն իրականացնում է արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն:

Առավել մանրամասն տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մշակութային օջախների վերաբերյալ տրված է հավելված 1- ում:

Համայնքի ենթակայության տակ գործում է 1 գեղարվեստի դպրոց՝ 60 աշակերտով, 1 պարարվեստի դպրոց՝ 62 աշակերտով, Պիոներ պալատ՝ 427 սանով, «Քրեյզի» պարային համույթ՝ 80 սանով, տիկնիկային թատրոն՝ 39 աշխատակցով:

Գյումրիում 17-30 տարեկան երիտասարդները կազմում են քաղաքի բնակչության մոտ 20%-ը: Աշխատատեղերի բացակայության պատճառով նրանց մի մասը ստիպված բռնում է արտագաղթի ճանապարհը և ինքնահաստատվում օտար երկրներում:

Երիտասարդների համար աշխատատեղեր ստեղծելու և ժամանցային հետաքրքիր միջոցառումների կազմակերպման առումով Գյումրու քաղաքապետարանը լուրջ անելիքներ ունի:

Հիմնախնդիրներ

- Ժամանակակից ընթերցողական գրականության համալրում:
- Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումների անհրաժեշտություն:
- Մշակութային շենքերի վերանորոգում:
- Մշտական ցուցադրությունների կազմակերպում:
- Ցուցասրահներում և ֆոնդապահոցներում կայուն ջերմաստիճանի ապահովում:
- Թանգարանային նմուշների անվտանգության ապահովում:
- Մշակութային հաստատությունների ջեռուցման համակարգերի ներդրման խնդիրներ:
- Պիոներ պալատի համար նորմալ շենքային պայմանների ստեղծում:
- Երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն:
- Երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ գտնվող տան տարածքում Արմեն և Նիկողայոս Տիգրանյանների հուշատուն - թանգարանի ստեղծում:
- Շերամի, Զիվանու, Իգիթի աշուղական դպրոց թանգարանի ստեղծում:
- Գյումրու թատրոնի նախկին շենքի վերակառուցում–վերանորոգում, մշակութային հիմնարկի վերածում:
- Մրցույթային կարգով Ադասի Շաբոյանի անվան պարային համույթի վերաստեղծում և բարձր աստիճանի մասնագիտացման ապահովում:
- Երտասարդության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կառույցների,

ուսանողական խորհուրդների, ոչ ֆորմալ խմբերի մասնակցությամբ մշակել և իրականացնել Գյումրու երիտասարդության զարգացման ռազմավարական ծրագիր:

• Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ համայնքի երիտասարդական կազմակերպությունների հետ և հաշվետվությունների ձևով ներկայացնել քաղաքապետարանի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից այս ոլորտում իրականացրած ծրագրեր:

Մշակութային հիշարժան տարեթվերին, տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումները և հուշ-երեկոները.

- Ամանորյա միջոցառումներ
- Բանակի օր
- Սուրբ Սարգիս և Գյումրու ձմեռ
- Սրբոց Վարդանանց տոն
- Ջարդերի զոհերի հիշատակի օր
- Կանանց միջազգային օր
- Թատրոնի միջազգային օր
- Երգիծանքի և հումորի օր
- Աշխատանքի օր
- Երկրապահի օր
- Հաղթանակի օր
- Թանգարանային աշխատողի օր
- Ավարայրի ճակատամարտի օր
- Հանրապետության տոն
- Երեխաների իրավունքների պաշտպանության օր
- Երաժշտական և արվեստի դպրոցների գալահամերգ
- Վերջին զանգ
- ՀՀ սահմանադրության օր
- Բազրատունյաց փառքի օր
- Գիտելիքի օր
- Անկախության տոն
- Ուսուցչի օր
- Գյումրու օր
- Երիտասարդների համերաշխության օր
- Ուսանողների միջազգային օր
- Երկրաշարժի զոհերի հիշատակի օր
- Տոնաձառի լույսերի տոնական վառման արարողություն
- Տարեմուտի երեկո
- Նշել հայ մեծանուն գրողների, բանաստեղծների, արվեստագետների, գյումրեցի մեծերի ծննդյան տարելիցները:

15. Նախադպրոցական կրթություն

Իրավիճակի գնահատում

Համայնքում գործում է 24 նախակրթական հաստատություն: Նախակրթարաններում հաճախում են 2900 երեխա: Աշխատում են 512 աշխատակից:

Գյումրի համայնքի նախադպրոցական կրթության ոլորտում 24 մանկապարտեզներից տասն ընդգրկված է «Նոր Պարտեզ մանկապարտեզներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեջ, որի պատճառով ոլորտը երկփեղկվել է, և ստեղծված դրությունը խոչընդոտում է նախակրթարանների աշխատանքների կազմակերպման արդյունավետությանը, ինքնուրույն գործունեության ապահովմանը, բարեգործական ծրագրերի ներգրավմանը: Ոլորտի կանոնակարգմանը կնպաստի «Նոր Պարտեզ մանկապարտեզներ» ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպումը առանձին գործող ՀՈԱԿ-ների:

Առավել մանրամասն տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների վերաբերյալ տրված է հավելված 2-ում:

Հիմնախնդիրներ

- Մանկապարտեզներից 4-ը գործում են տնակային կառույցներում:
- Նախակրթարանները ապահովված են հիմնականում հին գույքով և շենքերի մեծ մասն ունեն վերանորոգման կարիք:
- Նախակրթարանների ջեռուցման խնդրի կարգավորում:
- Նախակրթարանների շենքերի մասնակի վերանորոգումներ:
- Գույքի ձեռքբերում:
- Սննդի մատակարարման կանոնակարգում, կենտրոնացում և վերջինիս անվտանգության խնդիրների վերահսկում:
- Տնօրենների և դաստիարակների մասնագիտական կրթության համապատասխանության ստուգում, ատեստավորումների անցկացման անհրաժեշտություն և աշխատանքի ընդունման համար մրցույթների կազմակերպում:
- Դաստիարակչական գործընթացներում արդիական մեթոդների կիրառում՝ երեխայի ֆիզիկական, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծման, մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովման ուղղությամբ:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Համացանցի հաստատում կրթության բաժնում և բաժին-մանկապարտեզ կապի համակարգում:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման աշխատանքների կազմակերպում:
- Մուշ-2 թաղամասում մանկապարտեզի հիմնադրում:
- Նախադպրոցական կրթական գրականության ապահովում (ԿԳՆ և ԿԱԻ բարեփոխումների շուրջ ծրագրեր, ուղեցույցեր, օրինակելի պլաններ):
- Սոցիալապես անապահով ընտանիքների 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածության ապահովում:

- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների վերապատրաստում:
- Երեխաների խնամքին ուղղված ծառայությունների որակի բարելավում:
- Մանկավարժների գործունեության խրախուսում, մրցույթների անցկացում:
- Ուսումնադաստիարակչական գործընթացում ինտերակտիվ մեթոդների կիրառման ապահովում:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի բարելավում:

16.Ֆիզկուլտուրա և սպորտ

Իրավիճակի գնահատում

Քաղաքետարանի 15 մարզադպրոցներում աշխատում են 186 մարզիչ-մանկավարժ, որոնցից 36 ՀՀ վաստակավոր մարզիչ, 12 վաստակավոր աշխատող, մարզվում են շուրջ 3000 մարզիկ:

1988 թվականի Գյումրիի ավերիչ երկրաշարժից հետո քաղաքի սպորտային բնագավառը ժառանգեց կիսով չափ ավերված, առանց մարզական գույքի խարխուլ տնտեսություն:

1996 թվականից վերջին 16 տարիների ընթացքում քաղաքի մարզաբազաներում կատարվել են մասնակի նորոգումներ՝ բացառությամբ Շախմատի, Բոցքամարտի և Մամբո-ձյուդոյի մարզադպրոցների, որտեղ կատարվել են կապիտալ նորոգումներ:

Համայնքապատկան մարզադպրոցների մեծամասնությունը չունի ջեռուցման համակարգ, որի պատճառով նվազում են ձմեռային սեզոնում մարզումների որակն ու արդյունավետությունը, սաների հաճախումները: Մարզադպրոցներում օգտագործվող մարզագույքի մեծամասնությունը ունի 30-ամյա վաղեմություն:

Զնայած վերը նշված պայմաններին՝ մեր քաղաքի մարզչական բարձրակարգ աշխատանքի շնորհիվ ամեն տարի պատրաստվել են աշխարհի ու Եվրոպայի չեմպիոններ և մրցանակակիրներ, օլիմպիական խաղերի և միջազգային բարձր կարգի մրցաշարերի հաղթողներ և մրցանակակիրներ:

Առավել մանրամասն տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մարզադպրոցների վերաբերյալ տրված է հավելված 3-ում:

Հիմնախնդիրներ

- Բնակչության մեջ արմատավորված չէ ֆիզիկական կուլտուրան և առողջ ապրելակերպը:

- Այսօրվա դրությամբ քաղաքի 15 մարզադպրոցների բազաները գտնվում են չափազանց անմխիթար վիճակում և ունեն նորոգման և կահավորման խնդիր, որը մեծ խոչընդոտ է նոր սաների ընդգրկմանը և մարզումների պատշաճ ծանրաբեռնվածության ապահովմանը:

- Համայնքում չունենք նաև մրցումային դահլիճ, որտեղ հնարավորություն լինի կազմակերպել միջազգային մրցումներ, չնայած այն բանի, որ, համայնքում, ունենալով բազմաթիվ բարձրակարգ մարզիկներ (Օլիմպիական խաղերի մրցանակակիրներ,

աշխարհի չեմպիոններ և մրցանակակիրներ, Եվրոպայի չեմպիոններ և մրցանակակիրներ), բազմիցս տարբեր ֆեդերացիաներից առաջարկներ ենք ստանում՝ Գյումրիում միջազգային մրցումներ կազմակերպելու համար:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Մարզադպրոցների համար մարզական գույքի ձեռքբերում:
- Մարզադպրոցների շենքերի և մարզադաշտերի վերանորոգում:
- Մարզադպրոցների ջեռուցման համակարգերի կառուցում և վերանորոգում:
- Մարզադպրոցների ցնցուղների վերանորոգում և կառուցում:
- Մարզադպրոցների տարածքների բարեկարգում:
- Մասնագիտացված նոր մարզադահլիճների կառուցում:
- Լողի մարզադպրոցի լողավազանի ջրախողովակների նորոգում և փոխարինում:
- Պարի և սպորտային պարերի մ/դպ մարզադահլիճի ձեռք բերում:

17. Անձնակազմի կառավարում

Իրավիճակի գնահատում

Մինչև օրս Գյումրու քաղաքապետարանը գործել է տեղական ինքնակառավարման մարմնի կարգավիճակով, բաժին տեսակի ստորաբաժանումները հանդիսացել են մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ: Անձնակազմի կառավարման բաժինը վարում է թվով 168 համայնքային ծառայողի, 55 տնօրենի և մոտ 469 սպասարկող անձնակազմի անձնական գործեր, մշակում է համայնքային ծառայողների և ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների համալրման համար մրցույթներ և ատեստավորում անցկացնելու համար գրավոր և բանավոր հարցերի հարցաշարեր:

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարվելուց հետո՝ Գյումրի քաղաքի ավագանու կողմից ընդունվեց որոշում՝ «Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին:

2013 թվականի ընթացքում բյուջետային միջոցների հաշվին, օրենքով սահմանված կարգով, ենթակա են վերապատրաստման շուրջ 20 համայնքային ծառայող:

Նախատեսված նորաստեղծ ստորաբաժանումները առավել նպատակային և արդյունավետ կապահովեն Գյումրու քաղաքապետի և համայնքի լիազորությունների իրականացումը:

Հիմնախնդիրներ

- Անվանափոխության ենթարկված և (կամ) նոր ստեղծված ստորաբաժանումների համար համայնքի ղեկավարի որոշմամբ սահմանել համապատասխան լիազորություններ և գործառույթներ:
- Մշակել, հաստատել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ներկայացնել նորաստեղծ համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով:

- Օրենքով սահմանված կարգով կազմավորել մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների համալրման համար անհրաժեշտ պաշտոնատար անձանց ցուցակներ:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործման համար նախատեսվում է պարբերաբար կազմակերպել վերապատրաստման տեսական և գործնական դասընթացներ, սեմինարներ:

- Մշակել և Գյումրու քաղաքապետարանի էլեկտրոնային կայքում տեղադրել համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով, ինչպես նաև յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեության շրջանակները կարգավորող ակտերով սահմանված իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվություն:

- Սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար մրցույթներ:

- Սահմանված կարգով ընդունել ակտեր, որոնցով ղեկավարվեն համապատասխան ստորաբաժանումների համայնքային ծառայողները իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս:

- Բոլոր համայնքային ծառայողներին նախապատրաստել իրենց ոլորտների համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ իրականացնելու համար:

- Բոլոր համայնքային ծառայողներին նախապատրաստել իրենց ոլորտների համար անհրաժեշտ վարչական վարույթների նախապատրաստական փուլը կազմակերպելու աշխատանքներին:

Աշխատակազմի կառուցվածքը տրված է հավելվածներ 4-ում և 5-ում:

18. Գյումրու սոցիալ տնտեսական իրավիճակը

Ստորև տրվում են Գյումրի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի մի շարք բնութագրիչներ, որոնք ընկած են քաղաքի զարգացման քառամյա ծրագրի հիմքում:

Գյումրի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի մի շարք բնութագրիչներ

Աղյուսակ 1. Բնակչության իրավիճակի բնութագրիչներ

N	Բնութագրիչներ	Ժամանակահատվածը	Թիվը
1	Բնակչությունը (հազ.մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	145.8
2	Ծնվածներ (մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1496
3	Մահացածներ (մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1391

4	Ամուսնություններ (մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	520
5	Ամուսնալուծություններ (մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	143

Աղբյուրը՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժին

Ծանոթություն.

2009 թվականին բնակչության թիվը եղել է 146700 մարդ, 2012 թվականին՝ 145 800 մարդ: Այսինքն, նախորդ չորս տարիների ընթացքում (2009-2012թթ.) Գյումրի քաղաքի բնակչության թիվը նվազել է 900 մարդով:

Աղյուսակ 2. Սոցիալական ոլորտի բնութագրիչներ

1	Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված մարդ)	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	8 000
2	Կենսաթոշակառուներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	26 470
3	Հաշմանդամներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	10 915
4	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	9732

Աղբյուրները՝ Գյումրի-1 և Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ, Գյումրու զբաղվացության մարզային կենտրոն և shirak.gov.am կայք:

Աղյուսակ 3. Բնակելի ֆոնդի իրավիճակի բնութագրիչներ

1	Բազմաբնակարանային շենքեր	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1526
2	Բազմաբնակարանային վթարային շենքեր	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	69
3	Առանձնատներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	9438
4	Ժամանակավոր տնակներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	3927
5	Անօթևան ընտանիքների թիվը	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1458

Աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետարան

Աղյուսակ 4. Կրթության իրավիճակի բնութագրիչներ

1	Նախադպրոցական հաստատություններ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	24
2	Գյումրու հանրակրթական դպրոցներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	30
3	Գյումրու ավագ դպրոցներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	10
4	Գյումրու հատուկ դպրոց	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1
5	ԲՈՒՀ-եր	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	6
6	Միջին մասնագիտական հաստատություններ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	4
7	Արհեստագործական ուսումնարաններ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	3
8	Հանրակրթության ոլորտի մանկավարժներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1104
9	Հանրակրթական դպրոցների աշակերտներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	14 713

10	Միջին մասնագիտական	2011-2012 ուս. տարի	10
11	Բարձրագույն մասնագիտական	2011-2012 ուս. տարի	8

Աղբյուրը՝ Շիրակի մարզի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն
 Աղյուսակ 5. Առողջապահության ոլորտի իրավիճակի բնութագրիչներ

1	Հիվանդանոցներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	10
2	Պոլիկլինիկաներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	11
3	Բժշկական կենտրոններ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1
4	Բժիշկներ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	517
5	Միջին բուժ. անձնակազմ	առ 1-ը հոկտեմբերի 2012թ.	1241

Աղբյուրը՝ Պետական առողջապահական գործակալության Շիրակի մարզային կենտրոն

Աղյուսակ 6. Գյումրի քաղաքի վերաբերյալ վիճակագրական տվյալներ

գործունեության ոլորտը	կազմակերպ. քանակը	աշխատողների թվաքանակը
Արդյունաբերություն	86	1174
Շինարարություն	8	345
Առևտուր	344	1082
Ավտոմեքենաների տեխ. սպասարկում	17	66
Ծառայություն ընդամենը որից՝	362	5604
Կեցության և հանրային սննդի կազմակերպություն	74	308
Մշակույթ, զվարճություն, հանգիստ	21	408
Կրթություն	65	1750
Առողջապահության և բնակչության սոց. սպասարկում	63	2506
Անշարժ գույք	35	108
Վարչական և օժանդակ գործունեություն	21	109
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	40	126
Սպասարկման այլ ծառայություններ	43	289

Աղյուսակ 7. Գյումրի համայնքի բյուջեի կատարողականը 2012 հոկտեմբերի 1-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը

Եկամուտների անվանումը	2012թ. ինն ամիսների ծրագիր (հազար դրամ)	փաստացի կատարողական առ 01.10.2012 (հազար դրամ)	կատարողական %
Հողի հարկ	46,300.0	32,125.1	69.4
Գույքահարկ	293,000.0	180,110.7	61.5
Պետական տուրք	35,000.0	25,399.3	72.6
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	153,038.0	77,185.4	50.4
ա) հողի վարձավճար	143,452.0	70,129.2	48.9
բ) գույքի վարձավճար	9,586.0	7,056.2	73.6
Այլ եկամուտներ	397,818.0	223,104.6	56.1
Ընդամենը	925,156.0	537,925.1	58.1

Աղբյուրը՝ Գյումրու քաղաքապետարան

19. Համայնքի ընդհանուր իրավիճակի վերլուծություն

Համայնքի իրավիճակի վերլուծության համար օգտագործվել է Ուժ-Շեղ (SWOT-Strengths- Ուժեղ կողմերի, Weaknesses-Թույլ կողմերի, Opportunities-Հնարավորությունների, Threats-Վտանգների) վերլուծությունը:

SWOT վերլուծությունը անցկացվում է արտաքին միջավայրի համատեքստում համայնքի ընդհանուր իրավիճակի ուսումնասիրման համար:

Ուժեղ և թույլ կողմերը համայնքի ներքին վիճակի բնութագրիչներ են: Իսկ հնարավորությունները և վտանգները արտաքին միջավայրի հետ կապված բնութագրիչներ են:

SWOT-վերլուծության մեթոդաբանությունը հիմնված է, առաջին հերթին, համակարգի ներքին ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին հնարավորությունների և վտանգների

բացահայտման և, երկրորդ հերթին, դրանց միջև կապերի հաստատման վրա:

Տ-ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	Վ-ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ul style="list-style-type: none"> • Օդանավակայան և երկաթուղի • Վրաստանի հետ պետական սահման և միջպետական ճանապարհներ • Նորակառույց շենքեր ու շինություններ • Որակյալ առողջապահական կառույցներ • Նախադպրոցական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ • Մարդկային ինտելեկտուալ ռեսուրս • Հարուստ պատմամշակութային ժառանգություն • Սպորտային հարուստ ավանդույթներ, ինչպես նաև գյումրեցի մարզիկների՝ միջազգային ասպարեզում նվաճումներ • Ռուսաստանի հետ լայն մշակութային կապեր և ռուսաց լեզվին տիրապետում • Հայտնի մարդիկ (գրողներ, երաժիշտներ և այլն) 	<ul style="list-style-type: none"> • Անբարեկարգ փողոցներ և բակեր • Փողոցների վատ լուսավորվածություն • Ներդրումների ցածր մակարդակ • Ենթակառույցների անմատչելիություն հատուկ կարիքներով մարդկանց համար • Արտագնա աշխատանքների մեկնողների մեծ թիվ • Երիտասարդների մեծ հոսք դեպի մայրաքաղաք կամ արտերկիր • Ազգաբնակչության ծերացում • Սոցիալապես անապահով ընտանիքների և գործազուրկների մեծ թիվ • Քաղաքի հեղինակության ցածր մակարդակ • Մարզադպրոցների, նախակրթարանների և մշակութային օջախների շենքային վատ պայմանները և գույքի անմխիթար վիճակ • Անօթևանների դեռևս մեծ թիվ • Աշխատատեղերի բացակայություն • Էկոլոգիական անբավարար վիճակ • Տեղական ինքնակառավարման ոչ արդյունավետ կառուցված
<p style="text-align: center;">Օ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> • Տուրիզմի զարգացում՝ գրավիչ պայմանների ստեղծման և նոր տուրիստական երթուղիների ներդրումով: • Բարենպաստ միջավայրի ստեղծում ներդրողների համար • Ձեռներեցությամբ զբաղվողների համար բարենպաստ պայմանների ստեղծում • Միջազգային կառույցների ֆինանսական միջոցների ներգրավման համար աշխատանքների կազմակերպում • Որակյալ կադրերի ներգրավում • Կումայրի արգելոց - թանգարանի վերակազմավորում • Դոնոր կազմակերպությունների մոտ վստահելի գործընկերոջ իմիջի ձևավորում 	<p style="text-align: center;">Դ-ՎՏԱՆԳՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> • Համաճարակներ • Եղանակային անբարենպաստ պայմաններ • Միջպետական հարաբերությունների վատթարացում • Պատերազմական իրավիճակի առկայություն • Վթարային շենքերի առկայություն և տարածքի սեյսմիկ անկայունություն • Պետական դոտացիոն գումարների նվազեցում

Այս վերլուծությունը հնարավորություն է տալիս կազմել համայնքի զարգացման

տարբեր ռազմավարություններ.

ա) S-O – ուժեղ կողմերի և հնարավորությունների ավելացման ռազմավարություն.

բ) S-T – ուժեղ կողմերի ավելացման և վտանգների նվազեցման ռազմավարություն.

գ) W-O – թույլ կողմերի նվազեցման և հնարավորությունների ավելացման ռազմավարություն.

դ) W-T – թույլ կողմերի և վտանգների նվազեցման ռազմավարություն:

Բնական է՝ ամենալավ ռազմավարությունը S-O ռազմավարությունն է, որին պետք է ձգտի ցանկացած համայնք:

Հաշվի առնելով համայնքի իրավիճակի վերլուծությունը՝ մեր համայնքի քառամյա զարգացման ծրագրի իրագործման համար ամենահնարավոր տարբերակը W-O ռազմավարության ընտրությունն է:

20. Քառամյա կապիտալ ծրագրերը ըստ ոլորտների

Աղյուսակ 8. Բնակկոմունալ ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. դրամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Արագած փողոցի հիմնանորոգում	60.000	100	-	-	-	60.000	-
Շահումյան փողոցի հիմնանորոգում	60.000	100	-	-	-	60.000	-
Սպանդարյան փողոցի հիմնանորոգում	80.000	100	-	-	-	80.000	-
Շարա Տալյան փողոցի հիմնանորոգում	20.000		100	-	-	20.000	-

Վարդանանց հրապարակի հիմնանորոգում	90.000		100	-	-	90.000	-
Մազմանյան փողոց	10.000		100			10.000	
Լ. Մադոյան փողոցի հիմնանորոգում	40.000		100			40.000	-
Սավոյան փողոցի հարթեցում, խճապատում	10.000		100	-	-	10.000	-
Կոմիտաս փողոցի հիմնանորոգում	270.000	-	-	-	50	135.000	-
Ավստ. թաղամասից Մարմաշեն տանող խճուղու հիմնանորոգում	5.000	100	-	-	-	5.000	-
Լալայան փողոցի հարթեցում և խճապատում	15.000	-	100	-	-	15.000	-
Շահինյան փողոցի հիմնանորոգում	35.000	-	-	100	-	35.000	-
Մ. Մկրտչյան փողոցի շարունակության հիմնանորոգում	235.000	-	-	50	50	235.000	-
Ղուկասյան փողոցի հիմնանորոգում	180.000	-	-	50	50	180.000	-
ԸՆԴԱՄԵՆԸ	1.170.000					1.035.000	-

Աղյուսակ 9. Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. դրամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Գ. Նժդեհ և Խրիմյան Հայրիկ փողոցների միջև նոր փողոցի բացում	200000	100	-	-	-	50 000	150 000
Նոր գերեզմանատան ստեղծում	50000	100	-	-	-	50 000	-
Պատմամշակութային հուշարձանների վերականգնում	500000	20	40	20	20	50 000	450 000
Վթարային շենքերի ուժեղացում, վերականգնում	150000	25	25	20	20	-	150 000
Գլխավոր հատակագիծ և գոտևորման նախագիծ	35000	100	-	-	-	35 000	-

Կենտրոնական հրապարակի և շատրվանների վերակառուցում	200000	50	50	-	-	200 000	-
Քաղաքի մուտքերի ճարտարապետական ձևավորում	100000	-	50	50	-	100 000	-
Հասարակական գուգարանների կառուցում	40000	50	50	-	-	-	50 000
Ստորգետնյա անցումների վերակառուցում	100000	40	30	30	-	-	100 000
ԸՆԴԱՄԵՆԸ	1385000					485.000	900 000

Աղյուսակ 10. Տրանսպորտի ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. րամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Երթուղիների կանգառներում ցուցանակների տեղադրում	2500	30	20	30	20	2500	-
ԸՆԴԱՄԵՆԸ	2500					2500	

Աղյուսակ 11. Առևտրի և սպասարկման ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. ռամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Տոնավաճառի (վերնիսաժի) կազմակերպում	1845	100				1845	-
Գյուղ. ապրանքների 8 փոքր շուկաներ	10000	40	30	20	10	10000	-
ԸՆԴԱՄԵՆԸ	11845					11845	

Աղյուսակ 12. Արտաքին գովազդի ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

	Ծրագրերի	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)	Ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի անվանումը	մոտավոր արժեքը (հազ. ռամ)	2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Շենք-շինությունների հասցեների ցուցանակների տեղադրում	9000	20	30	30	20	9000	-
Փողոցների խաչմերուկներում քառակողմ ցուցանակների տեղադրում	2000	20	25	25	30		2000

Աղյուսակ 13. Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. ռամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
Մրցույթային կարգով Ա. Շաբոյանի անվ. պարային համույթի վերաստեղծում	22000	60	20	10	10	22000	

Շերամի, Ջիվանու, Իգիթի՝ աշուղական դպրոցի թանգարանի ստեղծում	25000	30	40	15	15	18000	7000
Ամենափրկիչ եկեղեցու հարևանությամբ գտնվող Ն. Տիգրանյանի տան տարածքում Արմեն և Նիկողայոս Տիգրանյանների հուշատուն-թանգարանի ստեղծում	35000	20	15	50	15	35000	
Գյումրու թատրոնի նախկին շենքի վերակառուցում-վերանորոգում, մշակութային հիմնարկի վերածում	120000	10	15	15	60	80000	40000
Ընդամենը	202000					155000	47000

Աղյուսակ 14. Նախադպրոցական կրթության ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

	Ծրագրերի մոտավոր	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		տարիների (%)				Համայնքի բյուջե (հազ.դրամ)	Այլ աղբյուրներ (հազ.դրամ)
		2013	2014	2015	2016		
Համացանցի հաստատում կրթության բաժնում և բաժին-մանկապարտեզ համակարգում	4.500	50	50			4500	

Առկա մանկապարտեզներից տնակային 4 կառույցների (3,10,22,30) կապիտալ կառուցում	240000	25	25	25	25		240000
Գույքի ձեռքբերում	14000					14000	
Մասնակի վերանորոգումներ 24 մանկապարտեզներում	16.000	25	25	25	25	16000	
Ընդամենը	274500					34500	240000

Աղյուսակ 15. Ֆիզկուլտուրա յի և սպորտի ոլորտի կապիտալ ծրագրերի ամփոփագիր

Ծրագրի անվանումը	Ծրագրերի մոտավոր արժեքը (հազ. դրամ)	Ծրագրերի կատարումն ըստ տարիների (%)				Ֆինանսավորման աղբյուրները	
		2013	2014	2015	2016	Համայնքի բյուջե (հազ. դրամ)	Այլ աղբյուրներ (հազ. դրամ)
«Գյումրու մարմնամարզիկ» ՓԲԸ շենքի, կտուրի, հանդերձարանների, սան հանգույցի նորոգում, շենքի ջերմամեկուսացում	5100	15	20	30	35	3100	2000

«Թենիսի և սեղանի թենիսի մարզադպրոց» ՀՈԱԿ մասնաշենքի և կտուրի հիմնանորոգում, կորտերի բարեկարգում, սեղանի թենիսի դահլիճի ձեռք բերում	5 500	15	20	30	35	3 500	2 000
«Ազատ ոճի ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ մասնաշենքի հիմնանորոգում, ջեռուցման համակարգի ստեղծում	4300	15	20	35	30	2300	2000
«Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ մարզադահլիճի հիմնանորոգում, ջեռուցման համակարգի արդիականացում, տարածքի բարեկարգում	5600	20	25	30	35	3600	2000
«Մամբո-ձյուդոյի մարզադպրոց» ՀՈԱԿ կտուրի նորոգում, մասնաշենքի և նստարանների նորոգում, ջեռուցման համակարգի ստեղծում	4200	15	25	30	30	2200	2000

«Յու.Վարդանյանի անվ. Ծանրամարտի մարզադպրոց» մասնաշենքի նորոգում, ջեռուցման	3800	25	25	25	25	1800	2000
«Համալիր մարզադպրոց -Լոռ» ՆՈԱԿ լողավազանի ներքին նորոգում, ջերմամեկուսացում, ջրախողովակների նորոգում և փոխարինում	4800	15	20	35	30	2800	2000
«Բոնցքամարտի մարզադպրոց» ՆՈԱԿ մարզադահլիճների ներքին նորոգում, տարածքների բարեկարգում, կտուրի նորոգում	6600	25	25	25	25	4600	2000
«Արամ Սարգսյանի անվ. Համալիր մարզադպրոց» ՆՈԱԿ ջերմամեկուսացում, ջեռուցման համակարգի ստեղծում, դահլիճի նորոգում	4300	15	20	30	35	2300	2000
«Շախմատի մարզադպրոց» ՆՈԱԿ մասնաշենքի կոսմետիկ նորոգում, տարածքի բարեկարգում	3700	20	20	30	30	1700	2000

«Համալիր մարզադպրոց-2» ՀՈԱԿ դահլիճի և մասնաշենքի հիմնանորոգում, ջերմամեկուսացում, ջեռուցման համակարգի ստեղծում	5600	25	25	25	25	3600	2000
ԸՆԴԱՄԵՆԸ	53 500					31 500	22 000

Հավելված 1

Տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մշակութային հաստատությունների վերաբերյալ:

Ն. Տիգրանյանի անվան արվեստի դպրոց	
Աշակերտների թիվը	393
Աշխատողների թիվը	78
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	1-ին հարկում խոնավացած պատերի վերանորոգում, դպրոցի մասնաշենքի կառուցում և վերանորոգում
Գույքային կարիք	դպրոցն ունի նոր դաշնամուրների կարիք
Ս. Տիգրանյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց	
Աշակերտների թիվը	172
Աշխատողների թիվը	34
Շենքի վիճակը	վատ
Նորոգման կարիք	հիմնանորոգում
Գույքային կարիք	սեղան, աթոռ, աշակերտական նստարան
Ա. Բրուսյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց	
Աշակերտների թիվը	171
Աշխատողների թիվը	37
Շենքի վիճակը	բավարար

Նորոգման կարիք	դահլիճի ջեռուցման համակարգի անցկացում, կտուրի հիմնանորոգում, հաստ ապակիների
Գույքային կարիք	աթոռ, սեղան, դահլիճային աթոռներ, ժող. և լարային գործիքներ
<<Անի>> փողային նվագախումբ	
Աշխատողների թիվը	23
Շենքի վիճակը	գործում է թիվ 4 երաժշտական դպրոցում
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	փողային գործիքների կարիք
<<Շերամի>> անվան թիվ 5 երաժշտական դպրոց	
Աշակերտների թիվը	192
Աշխատողների թիվը	41
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	կապիտալ վերանորոգման կարիք
Գույքային կարիք	համակարգիչ տպիչով (3 մեկում), փողային գործիքների կոմպլեկտ, սեղան, աթոռ, դահլիճային աթոռ, գրասենյակային գույք
Ա. Շիշյանի անվան թիվ 6 երաժշտական դպրոց	
Աշակերտների թիվը	226
Աշխատողների թիվը	40
Շենքի վիճակը	կառուցվող
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	դահլիճային աթոռներ, աշակերտական սեղան, աթոռներ
Խ. Ավետիսյանի անվան թիվ 7 երաժշտական դպրոց	
Աշակերտների թիվը	157
Աշխատողների թիվը	27
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	ջեռուցման համակարգի անցկացում, կտուրի վերանորոգում
Գույքային կարիք	աթոռ, պահարան, աշակերտական սեղան
Ս. Մերկուրովի անվան գեղարվեստի դպրոց	
Աշակերտների թիվը	62
Աշխատողների թիվը	18
Շենքի վիճակը	գործում է Հովհ. Թումանյանի անվան մանկական գրադարանի շենքում՝ զբաղեցնելով ընդամենը 3 դասարան
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	մուրերտ, տումբա, ռեկվիզիտներ
Ա. Շաբոյանի անվան պարարվեստի դպրոց	
Աշակերտների	86
Աշխատողների թիվը	10
Շենքի վիճակը	գործում է գուլպայագործների ակումբի շենքում
Նորոգման կարիք	հատակի նորոգում, պարասրահի ձողափայտեր

Գույքային կարիք	համակարգիչ, գրասենյակային գույք
Ա. Շաբոյանի անվան պարային համույթ	
Աշխատողների թիվը	10
Շենքի վիճակը	գործում է տնակային պայմաններում
Նորոգման կարիք	պարասրահի հիմնանորոգում, ջեռուցման համակարգի անցկացում
Գույքային կարիք	տարազներ
Ստ. Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոն	
Աշխատողների թիվը	34
Շենքի վիճակը	անբավարար
Նորոգման կարիք	կապիտալ վերանորոգում
Գույքային կարիք	երաժշտական կենտրոն, կինոպրոյեկտոր, թվային ապարատ, համակարգիչ տպիչով, թատերական փորձասեղաններ, մարդատար ավտոբուս
<<Քրեյզի>> պարային համույթ	
Աշխատողների թիվը	5
Շենքի վիճակը	գործում է թիվ 11 հանրակրթական դպրոցի շենքում
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	հայելիներ, սեղան, աթոռ
Պիոներ պալատ	
Աշակերտների թիվը	427
Աշխատողների թիվը	38
Շենքի վիճակը	գործում է տնակային պայմաններում
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	աթոռներ, համակարգիչ
Ավ. Իսահակյանի հուշատուն- թանգարան	
Աշխատողների թիվը	8
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	խոհանոցի, թոնրատան, մատանի պատերի վերանորոգում, մուտքի և ելքի դռների վերանորոգում
Գույքային կարիք	4-5 ցուցափեղկեր, համակարգիչ
Հովհ. Շիրազի հուշատուն- թանգարան	
Աշխատողների թիվը	10
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	մասնակի վերանորոգում, բակի ջրահեռացման համակարգի անցկացում, թեքահարթակի կառուցում, նկուղի վերանորոգում
Գույքային կարիք	3 ցուցափեղկ, աթոռներ՝ 50 հատ
Մհեր Մկրտչյան թանգարան	
Աշխատողների թիվը	8
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	թանգարանի դիզայնի փոփոխում, սանհանգուցի մասնակի նորոգում

Գույքային կարիք	գունավոր տպիչ, սկաներ, ապակեպատ պահարան
Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ	
Աշխատողների թիվը	11
Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	առաջին հարկի սրահների և միջանցքի կոսմետիկ վերանորոգում, ջեռուցման համակարգի անցկացում, պատշգամբի մասնակի վերանորոգում, բակի սալահատակի մասնակի վերանորոգում, ֆոնդային հատվածի ճաղապատում (երկու պատուհան և մեկ դուռ), անվտանգության համակարգի վերանորոգում կամ նոր տեսակի ձայնային-ազդանշանային համակարգի տեղադրում, տանիքի ջրահեռացման համակարգի կարգավորում, առաջին հարկում սանհանգույցի անհրաժեշտություն
Գույքային կարիք	թվային տեսախցիկ, պրինտեր, պրոյեկտոր, համակարգիչ, համացանց, գրապահարան, սեյֆ
Մկրտիչ Արմենի անվան կենտրոնական գրադարան ՀՈԱԿ	
Աշխատողների թիվը	17
Շենքի վիճակը	վատ, մի հատվածում ապրում է ընտանիք
Նորոգման կարիք	հիմնանորոգում
Գույքային կարիք	համակարգիչներ, սեղաններ, գրադարակներ
Հովհ. Հովհաննիսյանի անվան գրադարան	
Աշխատողների թիվը	7
Շենքի վիճակը	գործում է <<Տեքստիլ>> մարզամշակութային համալիրում
Նորոգման կարիք	մասնակի վերանորոգում
Գույքային կարիք	համակարգիչ, սեղան, աթոռ, գրադարակ
Հովհ. Թումանյանի անվան մանկական գրադարան	
Աշխատողների թիվը	10
Շենքի վիճակը	Բավարար
Նորոգման կարիք	վերանորոգում
Գույքային կարիք	համակարգիչ, գրադարակներ
Թիվ 9 գրադարան	
Աշխատողների թիվը	7
Շենքի վիճակը	վատ
Նորոգման կարիք	հիմնանորոգում
Գույքային կարիք	սեղան, աթոռ, համակարգիչ
«Անի» գրադարան	
Աշխատողների թիվը	7
Շենքի վիճակը	գործում է թիվ 37 հանրակրթական դպրոցի շենքում
Նորոգման կարիք	
Գույքային կարիք	գրադարակներ, համակարգիչ
Դ. Վարուժանի անվան մանկական գրադարան	
Աշխատողների թիվը	6

Շենքի վիճակը	բավարար
Նորոգման կարիք	մասնակի վերանորոգում
Գույքային կարիք	համակարգիչ, ընթերցասարահի սեղան, աթոռ

Հավելված 2

Տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների վերաբերյալ:

Համայնքի մանկապարտեզների անվանումը և համարը	Նախագծով նախատեսված տեղերի թիվը	Փաստացի խմբերի թիվը	Երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը	Մանկավարժական անձ. թիվը	Վերանորոգումը հիմնովին, մասնակի
Թիվ 1 մանկապարտեզ	120	4	95	27	9	մասնակի
Թիվ 3 մանկապարտեզ	150	5	145	53	13	մասնակի
<<Թոռնիկ Մանուշակ>> թիվ 4 մանկապարտեզ	180	5	140	50	11	մասնակի
Թիվ 5 մանկապարտեզ	180	5	135	52	11	մասնակի
Թիվ 6 մանկապարտեզ	180	6	165	60	15	մասնակի
<<Արձագանք>> թիվ 8 մանկապարտեզ	150	6	150	50	12	մասնակի
Թիվ 9 մանկապարտեզ	150	4	80	20	10	մասնակի
Թիվ 10 մանկապարտեզ	100	4	80	20	11	մասնակի
Թիվ 11 մանկապարտեզ	120	4	106	29	12	մասնակի
<<Արևիկ>> թիվ 12 մանկապարտեզ	150	4	75	18	10	մասնակի
<<Արարատ>> թիվ 13 կրթահամալիր	200	4/4 դաս.	170	27	14	մասնակի
Թիվ 16 մանկապարտեզ	120	5	165	38	14	մասնակի
<<Փարոս>> թիվ 17 մանկապարտեզ	120	5	116	43	11	մասնակի
<<Անի պարտեզ>> թիվ 18 մանկապարտեզ	150	6	186	60	15	մասնակի
Թիվ 20 մանկապարտեզ	60	2	60	30	6	մասնակի
Թիվ 21 մանկապարտեզ	125	4	106	40	9	մասնակի
Թիվ 22 մանկապարտեզ	105	4	80	25	9	մասնակի
<<Մանկիկ>> թիվ 23 մանկապարտեզ	75	4	90	35	10	մասնակի
Թիվ 24 մանկապարտեզ	150	5	130	45	12	մասնակի
Թիվ 26 մանկապարտեզ	180	6	156	59	11	մասնակի
<<Հուսո առագաստ>> թիվ 27 մանկապարտեզ	180	5	180	49	10	մասնակի

Թիվ 28 մանկապարտեզ	85	4	90	33	8	մասնակի
Թիվ 29 մանկապարտեզ	120	5	125	42	10	մասնակի
Թիվ 30 մանկապարտեզ	115	6	115	38	12	մասնակի

Հավելված 3


Տեղեկատվություն քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մարզադպրոցների վերաբերյալ

Գյումրու մարմնամարզիկ ՓԲԸ	
Աշակերտների թիվը	165
Աշխատողների թիվը	26
Շենքի վիճակը	Ունի վերանորոգման կարիք
Գույքային կարիք	Պտտաձող, տղամարդկանց զուգափայտ, նժույգ, հենացատկի սարք, ազատ վարժությունների մարզագորգ, բատուտի ցանց, ակրոբատիկական վազբուլի
Պարի և սպորտային պարերի մասնագիտացված դպրոց	
Աշակերտների թիվը	96
Աշխատողների թիվը	12
Շենքի վիճակը	Սեփական շենք չունի
Գույքային կարիք	ուղեգորգ
Աթլետիկայի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	189
Աշխատողների թիվը	18
Շենքի վիճակը	Սեփական շենք չունի (քաղ. մարզադաշտ)
Գույքային կարիք	Վազբի կաղապարներ, նիզակ, գունդ, ծանրաձող, սեպավոր կոշիկներ
Թենիսի և սեղանի թենիսի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	165
Աշխատողների թիվը	19
Շենքի վիճակը	Կապիտալ նորոգման խիստ կարիք, ջեռուցման համակարգի կարիք
Գույքային կարիք	Թենիսի ցանցեր, գծեր, ռակետներ (մեծ թենիս), թենիսի սեղան, ռակետ
Հրաձգության մարզադպրոց	
Աշակերտների թիվը	168
Աշխատողների թիվը	19
Շենքի վիճակը	Նախկին ԴՕՍԱԱՖ-ի հրաձգարան (կարգավիճակը՝ անորոշ)
Գույքային կարիք	Ժամանակակից զենքեր, հրաձգի հանդերձանքներ
Ազատ ոճի ըմբշամարտի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	167
Աշխատողների թիվը	22

Շենքի վիճակը	Ունի վերանորոգման խիստ կարիք, ջեռուցման համակարգի կարիք
Գույքային կարիք	Ըմբշամարտի գորգ, տրենաժոր, խրտվիլակներ, ծանրաձող
Հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	166
Աշխատողների թիվը	22
Շենքի վիճակը	Ունի վերանորոգման խիստ կարիք
Գույքային կարիք	Ըմբշամարտի գորգ, տրենաժոր, խրտվիլակներ, ծանրաձող
Սաքմբո-ձյուդոյի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	200
Աշխատողների թիվը	21
Շենքի վիճակը	Ունի վերանորոգման խիստ կարիք, ջեռուցման համակարգի կարիք
Գույքային կարիք	Ձյուդոյի տատամի (կոմպլեկտ), տրենաժոր, խրտվիլակներ
Յու. Վարդանյանի անվան ծանրամարտի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	155
Աշխատողների թիվը	22
Շենքի վիճակը	Կապիտալ նորոգում, ջեռուցման համակարգի ստեղծում
Գույքային կարիք	Ծանրամարտի հարթակ, ծանրաձողեր, տրենաժորներ
Համալիր մարզադպրոց /Լոդ	
Աշակերտների թիվը	160
Աշխատողների թիվը	19
Շենքի վիճակը	Ունի նորոգման խիստ կարիք
Գույքային կարիք	Լոդուղիներ, տրենաժոր
Բոնցքամարտի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	217
Աշխատողների	27
Շենքի վիճակը	Ունի մասնակի նորոգման կարիք (բավարար)
Գույքային կարիք	Բոնցքամարտի ռինգ, պարկեր, ձեռնոցներ, տրենաժոր
Արամ Սարգսյանի անվ. Համալիր մարզադպրոց	
Աշակերտների թիվը	229
Աշխատողների թիվը	27
Շենքի վիճակը	Ունի նորոգման կարիք, ջերմամեկուսացման, ջեռուցման համակարգի կարիք
Գույքային կարիք	Տրենաժորներ, վոլեյբոլի, բասկետբոլի գնդակներ, վահաններ

Շախմատի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	233
Աշխատողների թիվը	27
Շենքի վիճակը	Նորմալ
Գույքային կարիք	Շախմատներ, շախմատի սեղաններ, ժամացույցներ, համակարգիչներ
Տ.Պետրոսյանի անվ. Շախմատի մարզադպրոց	
Աշակերտների թիվը	221
Աշխատողների թիվը	16
Շենքի վիճակը	Սեփական շենք չունի (արենդավճարով)
Գույքային կարիք	Շախմատներ, շախմատի սեղաններ, ժամացույցներ, համակարգիչներ
Համալիր-2 մարզադպրոց	
Աշակերտների թիվը	144
Աշխատողների թիվը	14
Շենքի վիճակը	Ունի նորոգման կարիք (կատարվում է նորոգման աշխատանքներ), ջերմամեկուսացման, ջեռուցման համակարգի կարիք
Գույքային կարիք	Ձեռքի գնդակներ, տրենաժորներ, գրասեղաններ, պահարաններ, ծանրաձող, մականախաղի մականներ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը՝



ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

համայնքային կառավաչական հիմնարկի

Աշխատազմի կառուցվածքային ստորաբաժանումներ

- 1) Ներքին աուդիտի բաժին
- 2) Վերահսկողության բաժին
- 3) Համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժին
- 4) Համատիրությունների մոնիտորինգի բաժին
- 5) Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժին
- 6) Քաղաքաշինության և ճարտարապետության բաժին
- 7) Ֆինանսատնտեսագիտական բաժին
- 8) Բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին
- 9) Առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին
- 10) Գովազդի բաժին
- 11) Ծրագրերի և վերլուծության բաժին
- 12) Արտաքին կապերի, տուրիզմի և արարողակարգերի բաժին
- 13) Ինքնակամ շինությունների և հողի վերհսկողության բաժին
- 14) Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժին
- 15) Կրթության բաժին
- 16) Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժին
- 17) Տրանսպորտի բաժին
- 18) Իրավաբանական ապահովման բաժին
- 19) Անձնակազմի կառավարման բաժին
- 20) Քարտողարության բաժին
- 21) Հասարակական կարգի պահպանության աջակցության բաժին

Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ

- 1) Սոցիալական ծառայությունների Գյումրի-1 տարածքային բաժին
- 2) Սոցիալական ծառայությունների Գյումրի-2 տարածքային բաժին
- 3) Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գյումրու տարածքային բաժին